

**ՁԵՌՆԱՐԿ
ԱՆԸԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ
ՇԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՎՃԱՐՆԵՐԻ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԵՐԵՎԱՆ ■ 2006

ՀՏԴ 347.73:336(479.25)
ԳՄԴ 67.99(2Հ)2+65.9(2Հ)261.3
2-464

*Մույն գիրքը հրատարակվել է Համաշխարհային
Բանկի Աղքատության հաղթահարման աջակցության
ծրագրի շրջանակներում*

2-464 Չեռնարկ անհատ ձեռնարկատիրոջ հարկային և սույնալական վճարների պարտավորությունների վերաբերյալ: — Եր., Գար, 2006, 108 էջ:

Չեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ցանկություն ունեցող քաղաքացիներին հասցեագրված այս ձեռնարկում շարադրված են Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության նորմերը, որոնց իմացությունը սեփական գործը արդյունավետ կազմակերպելու և հնարավոր սխալներից խուսափելու անհրաժեշտ պայմաններից է:

Մույն գրքի ցանկացած մաս չի թույլատրվում որևէ կերպով փոխանցել կամ արտատպել առանց ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գրավոր թույլտվության:

$\frac{2}{0123(01)2006}$ 1203020300 2006

ԳՄԴ 67.99(2Հ)2+65.9(2Հ)261.3

ISBN 99941-47-14-5

© ՀՀ ԿԱ ՀՊՆ, 2006

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Անհատ ձեռնարկատերը, իրավունքներն ու պարտավորությունները	5
1.1. Որպես անհատ ձեռնարկատեր ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցումը	8
1.2. Որպես հարկ վճարող և ապահովադիր հարկային մարմիններում հաշվառվելը	11
2. Գործունեության լիցենզիան	12
2.1. Պետական տուրքերը, տեղական տուրքերը և տեղական վճարները	15
2.2. Կարգավորման պարտադիր վճարներ	18
3. Ընդհանուր հարկման ռեժիմը	20
3.1. Ավելացված արժեքի հարկը	21
3.2. Ակցիզային հարկը	32
3.3. Եկամտահարկը	37
4. Պարզեցված հարկի ռեժիմը	50
4.1. Պարզեցված հարկը	50
5. Հաստատագրված վճարները	56
6. Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները	60
7. Գույքահարկը	63
8. Հողի հարկը	69
9. Բնապահպանական և բնօգտագործման վճարները	70
10. Ճանապարհային վճարը	76
11. Ներմուծում	77
11.1. Մաքսավճարը	77
11.2. Մաքսատուրքը	79
11.3. Մաքսային մարմինների կողմից գանձվող հարկերը և հաստատագրված վճարները	81
12. Հարկային գործակալը, ապահովադիրը	88
12.1. Ավելացված արժեքի հարկը	89
12.2. Ոչ ռեզիդենտի շահութահարկը	89
12.3. Եկամտահարկը	91
12.4. Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները	97

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համաձայն, յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք, որի իրականացման հետ կապված սահմանափակումները սահմանվում են օրենքով:

Սահմանադրական այս իրավունքի իրագործման համար անձին գործնականում անհրաժեշտ են ոչ միայն կապիտալի խոշոր սկզբնական ներդրումներ, այլ նաև գործող օրենսդրության իմացություն, ինչը հնարավորություններ կընձեռնի սխալներից խուսափելու և սեփական գործի արդյունավետ կազմակերպման համար:

1. ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԸ. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելու, ապրանքներ վաճառելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու շահույթ (եկամուտ) ստանալն է:

Այս սահմանումը նախատեսում է որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում միայն տվյալ գործունեությունը կարող է հանդիսանալ ձեռնարկատիրական գործունեություն:

Գործունեությունը ձեռնարկատիրական է համարվում, երբ իրականացվում է տվյալ անձի կողմից՝

ա) ինքնուրույն, իր ռիսկով, այսինքն տվյալ գործունեությամբ զբաղվելու նախաձեռնությունը անձինն է և ինքն է որոշում այդ գործունեության տեսակը, այն իրականացնելու ձևերն ու ներդրվող միջոցները, կնքում գործարքներ իր ընտրած անձանց հետ, իր հայեցողությամբ ձեռք բերում, տիրապետում, օգտագործում և տնօրինում գույք և ինքն է հանդիսանում իր գործունեության հետևանքների կրողը: Այսպես օրինակ՝ խանութում աշխատանքային պայմանագրով որպես վաճառող աշխատող անձը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող (թեև արտաքնապես կատարում է առևտրով զբաղվող անհատ ձեռնարկատիրոջը համանման գործունեություն), քանի որ ինքը չի նախաձեռնել այդ գործունեությունը, որևէ գույքային ներդրում չի կատարել և իր գործողությունների հետևանքների կրողը ոչ թե ինքն է, այլ իրեն հետ աշխատանքային պայմանագիր կնքած գործատուն է.

բ) գույք օգտագործել, ապրանքներ վաճառել, աշխատանքներ կատարել կամ ծառայություններ մատուցել եկամուտ ստանալու նպատակով, ընդ որում՝ գործունեության արդյունքում եկամտի կամ

վնասի փաստացի ստացումը նշանակություն չի ունենում գործունեությունը ձեռնարկատիրական որակելու համար, եթե առկա է եղել եկամուտ ստանալու նպատակը:

Հայաստանի Հանրապետությունում առանց պետական գրանցման արգելվում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը:

Ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու համար անձը կարող է գրանցվել կամ որպես անհատ ձեռնարկատեր, կամ հիմնադրել իրավաբանական անձ՝ կազմակերպություն:

Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց եկամուտ ստանալն է:


Անհատ ձեռնարկատեր կարող են լինել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա գործունակ քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող այն անձինք, որոնց ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու իրավունքը չի սահմանափակված օրենքով:

Անհատ ձեռնարկատիրոջ գտնվելու վայրը նրա բնակության վայրն է:

Անհատ ձեռնարկատերն ունի գույք՝ սեփականության իրավունքով, և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով (բացառությամբ այն գույքի, որի վրա, օրենքին համապատասխան, բռնագանձում չի տարածվում): Անհատ ձեռնարկատերն օրենսդրությամբ սահմանված կարգով կրում է պատասխանատվություն՝ իր կողմից այլ անձանց պատճառված վնասի համար: Նա կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Անհատ ձեռնարկատերն իրավունք ունի՝

- ա) օրենքով նախատեսված դեպքերում հիմնադրել առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակիցը.
- բ) ունենալ առևտրային ներկայացուցչություններ.
- գ) լինել հավատարմագրային կառավարիչ.



- դ) այլ անհատ ձեռնարկատերերի կամ առևտրային կազմակերպությունների հետ պայմանագրի համաձայն իրականացնել համատեղ գործունեություն.
- ե) ունենալ կնիք, դրոշմակնիք և բանկում հաշվարկային հաշիվ.
- զ) ունենալ վարձու աշխատողներ.
- է) ունենալ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

Անհատ ձեռնարկատիրոջ գործունեության ֆինանսական ցուցանիշը նրա ստացած եկամուտն է: Անհատ ձեռնարկատերը հաշվապահական հաշվառում չի վարում և չունի հաշվեկշիռ՝ նա պարտավոր է վարել եկամուտների և ծախսերի հաշվառում:

Անհատ ձեռնարկատերը պարտավոր է՝

- ա) իր գործունեության ընթացքում պահպանել մարդկանց անվտանգության ապահովման, կյանքի և առողջության պաշտպանության, բնության և մշակութային արժեքների պահպանության մասին օրենսդրությամբ սահմանված պայմանները.
- բ) օրենքով սահմանված դեպքերում և կարգով ինքնասնանկության մասին հայցով դիմել դատարան.
- գ) օրենքով սահմանված կարգով կրել այլ պարտականություններ:

Անհատ ձեռնարկատերը օրենքով սահմանված կարգով վճարում է համապատասխան հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ, որոնք ներկայացված են նախորդ էջում բերված սխեմայում.

Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական գրանցման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից:

1.1. Որպես անհատ ձեռնարկատեր ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցումը

Անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցումը և նրա գործունեության դադարեցումն իրականացվում են «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ Արդարադատության նախարար-

րության կազմում գործող պետական ռեզիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից:

Պետական գրանցման համար անհատ ձեռնարկատերը ներկայացնում է՝

- ա) գրանցման մասին դիմում՝ նշելով անունը, անձնագրի տվյալները, բնակության (հաշվառման) վայրը, գործունեության ժամկետը, ինչպես նաև հավաստում է, որ այլ տեղ գրանցված չէ որպես անհատ ձեռնարկատեր (ձեռներեց)։
- բ) անձնագրի պատճենը.
- գ) լուսանկար.
- դ) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Պետական ռեզիստրի տարածքային ստորաբաժանումում ստուգվում են ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունն օրենքների պահանջներին, որից հետո, պետական գրանցումը մերժելու հիմքեր չհայտնաբերելու դեպքում, տարածքային ստորաբաժանման կողմից անհատ ձեռնարկատիրոջը շնորհվում է գրանցման համար և տրամադրվում է պետական գրանցման վկայական, որը նրա ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը հաստատող փաստաթուղթն է:

Պետական գրանցման համար փաստաթղթերի ներկայացման օրը պետական ռեզիստրում գրանցման համար սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի փաստացի ներկայացման ամսաթիվն է, որը նշվում է ստացված դիմումի վրա՝ փաստաթղթերն ընդունած անձի ստորագրությամբ, և գրառվում նաև փաստաթղթերի ընդունման մատյանում:

Պետական գրանցումը կատարվում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման պահից ոչ ուշ, քան 2 օրվա ընթացքում:

Անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման դեպքում անհատ ձեռնարկատերը պետական ռեզիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանում է ներկայացնում՝

- ա) դիմում.
- բ) տեղեկանքներ հարկային մարմիններից՝ պարտավորությունների բացակայության մասին.
- գ) պետական գրանցման վկայականը.
- դ) իր կողմից տեղեկանք՝ «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ

մասի պահանջների կատարման մասին (կազմակերպել իր գործունեությանը առաջացած անձնակազմին վերաբերող փաստաթղթերի առանձնացումը և հանձնումը պետական կամ համայնքային արխիվ):

Պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումում ստուգվում է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունն օրենքի պահանջներին: Մահացած անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականի մարումն իրականացվում է շահագրգիռ անձի դիմումի համաձայն, որի համար ներկայացվում են անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականն ու մահվան փաստը հավաստող փաստաթուղթը:

Եթե գրանցման հայտի հետ չի ներկայացվել հարկային մարմիններից պարտավորությունների բացակայության մասին տեղեկանք(ներ)ը, ապա պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումը 3-օրյա ժամկետում հարյում է ուղարկում հարկային մարմինների համապատասխան տարածքային ստորաբաժանումներին՝ վերջիններիս նկատմամբ անհատ ձեռնարկատիրոջ պարտավորությունների բացակայությունը հավաստելու վերաբերյալ: Հարկային մարմինները պատասխանում են հարցմանն այն ուղարկելու օրվանից 30 օրվա ընթացքում: Նշված ժամկետում հարկային մարմինների կողմից պատասխան չներկայացնելը դիտվում է որպես վերջիններիս նկատմամբ գործունեությունը դադարեցնող անհատ ձեռնարկատիրոջ պարտավորությունների բացակայության հավաստում:

Ներկայացված փաստաթղթերի ստուգումից հետո, գործունեության դադարման պետական գրանցումը մերժելու հիմքեր չհայտնաբերելու դեպքում, տարածքային ստորաբաժանման ղեկավարն անհրաժեշտ տեղեկությունները լրացնում է քարտում, ստորագրում ու կնքում է այն և գործունեության դադարումը գրառում է պետական գրանցամատյանում:

Անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը համարվում է դադարած այդ մասին պետական գրանցամատյանում գրառման պահից, ինչի մասին տրվում է տեղեկանք:

Անհատ ձեռնարկատերերի լուծարման գրանցման համար պետական տուրք չի գանձվում:

1.2. Որպես հարկ վճարող և ապահովագիր հարկային մարմիններում հաշվառվելը

Անհատ ձեռնարկատերը պետական գրանցում ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում պարտավոր է որպես հարկ վճարող հաշվառման կանգնել հարկային մարմնում ու ստանալ՝ Կառավարության 07.06.1995թ. «Հայաստանի Հանրապետության տարածքում հարկ վճարողների հաշվառման համարների համակարգի սահմանման մասին» N 321 որոշմանը համապատասխան, հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ): Անհատ ձեռնարկատերերը որպես ապահովագիր հաշվառվում են այն հարկային տեսչություններում, որտեղ հաշվառվում են որպես հարկ վճարող:

Հարկային մարմնում հաշվառվելու նպատակով նա դիմում է իր պետական գրանցման վայրի տարածքային հարկային տեսչություն և լրացնում է ՀՎՀՀ ստանալու համար քարտը, որում անհատ ձեռնարկատերը նշում է՝ իր անուն, ազգանուն, հայրանունը, պետական գրանցման վկայականի համարը և ամսաթիվը, բնակության վայրը (հասցեն), հեռախոսի համարները, գործունեության տեսակները, բանկային հաշվի համարները: Հարկային մարմնի կողմից անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ-ն և ապահովագրի ծածկագիրը տրամադրվում են նշված քարտը (դիմումը) լրացնելուց և տարածքային հարկային մարմին մուտքագրվելուց հետո՝ ոչ ուշ քան 3-օրյա ժամկետում:

ՀՎՀՀ-ն պարտադիր պետք է լինի իր կողմից կնքվող փաստաթղթերի, ներմուծման մաքսային փաստաթղթերի, հարկային մարմիններին ներկայացվող հաշվարկների, հաշվետվությունների, հայտարարագրերի, տեղեկությունների վրա: ՀՎՀՀ-ն (որը միաժամանակ նաև նրա որպես ապահովագիր ծածկագիրն է) միակն է, ենթակա չէ որևէ ընթացիկ փոփոխման և կազմված է ութանիշ թվից: Անհատ ձեռնարկատիրոջ վերը բերված քարտային տվյալներում փոփոխություններ տեղի ունենալու դեպքում նա պարտավոր է 10-օրյա ժամկետում դրա մասին գրավոր հայտնել իր հաշվառման վայրի հարկային տեսչություն:

2.

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆ

Գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, անհատ ձեռնարկատերը կարող է զբաղվել միայն հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա:

Լիցենզիան տրվում է միայն նշված օրենքի 43-րդ հոդվածով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության յուրաքանչյուր տեսակի համար:

Լիցենզիաները տալիս են միայն օրենքով նախատեսված լիազորված պետական մարմինները: Լիցենզավորող մարմինների (Կառավարություն, Կենտրոնական Բանկ, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով, Նախարարություններ և Գերատեսչություններ) կողմից լիցենզիաները տրվում են օրենքով նախատեսված գործունեության համապատասխան տեսակներով զբաղվելու համար:

Լիցենզավորման ենթակա գործունեության այն տեսակների համար, որոնց իրականացումը պահանջում է մասնագիտական գիտելիքներ և լիցենզավորման կարգերով կարող են սահմանվել մասնագիտական որակավորման պահանջներ:

Լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզիաների գրանցամատյաններից այլ անձանց տեղեկությունների տրամադրման, ինչպես նաև այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու, որակավորման քննությանը մասնակցելու համար գանձվում է պետական տուրք:

Լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար օրենքով նախատեսված են տարեկան տուրքեր:

Լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար կարող են տրվել լիցենզիաների հետևյալ տեսակները՝

- 1) պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաներ.
- 2) բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաներ:

Պարզ ընթացակարգով տրվող լիցենզիան լիցենզավորող մարմնի կողմից տրված գործունեություն իրականացնելու թույլտվու-

թյունն է, որով սահմանվում են տվյալ գործունեության իրականացման համար պարտադիր պահանջներ կամ պայմաններ, և դրանց պահպանման նկատմամբ իրականացվում է օրենքով սահմանված հսկողություն:

Պարզ լիցենզիան տրվում է առանց լիցենզավորող հանձնաժողովի որոշման:

Պարզ լիցենզիան տրվում է անժամկետ՝ հայտատուի կողմից օրենքով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց 3 օր հետո:

Մինչև լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելը պարզ լիցենզիա ստացած անձը պարտավոր է լիցենզավորող մարմիններ ուղարկել գրավոր հաղորդագրություն, որտեղ պետք է նշվեն անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունն ու բնակության վայրը, ինչպես նաև նրա կողմից լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրը (նշվում է, եթե օրենքի համաձայն լիցենզավորման ենթակա գործունեությունը պետք է իրականացվի միայն համապատասխան վայրում), լիցենզիայի վավերապայմանները, լիցենզավորման ենթակա գործունեությունն սկսելու օրը:

Պարզ լիցենզիա ստանալու համար հայտատուն լիցենզավորող մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- 1) լիցենզիա ստանալու մասին հայտը, նշելով՝
 - ա) անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, բնակության և գործունեության իրականացման վայրերը,
 - բ) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,
 - գ) օրենքով նախատեսված այլ տեղեկատվություն,
 - դ) հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկատվություն.
- 2) պետական գրանցման վկայականի պատճենը.
- 3) օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր:

Բարդ ընթացակարգով տրվող լիցենզիան լիցենզավորող մարմնի կողմից լիցենզավորման կարգերին համապատասխան տրվող գործունեություն իրականացնելու թույլտվությունն է, որով սահմանվում են նաև տվյալ գործունեության իրականացման համար պարտադիր պահանջներ կամ պայմաններ, և դրանց պահպանման նկատմամբ իրականացվում է օրենքով սահմանված կարգով հսկողություն:

Բարդ լիցենզիան տրվում է լիցենզիա ստանալու համար օրենքով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ:

Բարդ լիցենզիան տրվում է անժամկետ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Օրենքով նախատեսված դեպքերում բարդ լիցենզիան կարող է տրվել նրույթով, որն իրականացվում է լիցենզավորման կարգերին համապատասխան:

Բարդ լիցենզիաները տրվում են լիցենզավորող մարմինների կողմից ստեղծված լիցենզավորող հանձնաժողովների եզրակացությունների հիման վրա:

Բարդ լիցենզիա ստանալու համար հայտատուն լիցենզավորող մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- 1) լիցենզիա ստանալու մասին հայտը, նշելով՝
 - ա) անունը, ազգանունը, բնակության և գործունեության իրականացման վայրերը,
 - բ) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,
 - գ) օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ տեղեկատվություն,
 - դ) հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկատվություն.
- 2) պետական գրանցման վկայականի պատճենը.
- 3) անձի մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթուղթը՝ որակավորում պահանջող գործունեության տեսակով զբաղվելու համար հայտ ներկայացվելու դեպքում.
- 4) օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ փաստաթղթեր:

Լիցենզիա ստանալու համար վերը բերված անհրաժեշտ փաստաթղթերը կարող են լիցենզավորող մարմին հանձնվել առձեռն կամ փոստով:

Եթե օրենքով սահմանված ժամկետներում լիցենզիա ստանալու հայտը չի մերժվում, և հայտատուն օրենքով սահմանված կարգով և չափով վճարել է պետական տուրքը և վճարումը հավաստող փաստա-

թուրքը ներկայացրել է լիցենզավորող մարմին, ապա լիցենզավորող մարմինը պարտավոր է այդ ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին տրամադրել լիցենզիա, և լիցենզիան հայտատուին հանձնելու կամ ուղարկելու օրվանը հաջորդող օրվանից հայտատուն իրավունք ունի զբաղվելու տվյալ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով:

Անհատ ձեռնարկատիրոջ անվան կամ բնակության վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ 15 օրվա ժամկետում, հայտ ներկայացնել լիցենզիայի վերաձևակերպման մասին՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:

2.1.

Պետական տուրքերը, տեղական տուրքերը և տեղական վճարները

Հայաստանի Հանրապետությունում **պետական տուրքը** պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար պետական կամ համայնքների բյուջեներ մուծվող պարտադիր վճար է: Անհատ ձեռնարկատերը հանդիսանում է պետական տուրք վճարող, եթե օգտվում է օրենքով սահմանված ծառայություններից կամ գործողություններից:

Պետական տուրքը գանձվում է, մասնավորապես՝

- դատարան տրվող (հայցա)դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների, դատարանների կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ տալու համար,
- նոտարական գործողությունների համար,
- պետական գրանցման համար,
- գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, լիցենզավորվող գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար:

Պետական տուրքը գանձվում է մինչև համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը:

Պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի նկատմամբ կամ բազային տուրքի (բազային տուրքի չափը սահմանված է 1,0 հազ. դրամ) նկատմամբ:

Օրինակ՝ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման համար պետական տուրքը գանձվում է բազային տուրքի 3-ապատիկի չափով (կամ՝ 3,0 հազ. դրամ), տվյալների փոփոխության պետական գրանցման համար՝ բազային տուրքի 150%-ի չափով (կամ՝ 1,5 հազ. դրամ), պետական գրանցման վկայականի կրկնօրինակը տալու համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով (կամ՝ 6,0 հազ. դրամ):

Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքը գանձվում է օրենքի 19-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերով: Տարեկան պետական տուրքերի վճարումը յուրաքանչյուր տարվա համար կատարվում է մեկ տարվա ընթացքում:

Տեղական տուրքերը և վճարները սահմանված են «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Տեղական տուրքերը համայնքներում սահմանվում են՝

- համայնքի տարածքում շինարարության, շենքերը (շինությունները) և քաղաքաշինական այլ (ներառյալ՝ ժամանակավոր) օբյեկտները ամրացնելու, վերականգնելու, արդիականացնելու (բացառությամբ՝ ներքին ընթացիկ վերանորոգման և հարդարման) և արտաքին տեսքը փոփոխող այլ աշխատանքներ սկսելու թույլտվության,
- համայնքի տարածքում շենքեր (շինություններ) և քաղաքաշինական այլ օբյեկտներ քանդելու աշխատանքները սկսելու թույլտվության,
- համայնքի տարածքում ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության,
- համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու (բացառությամբ՝ շուկաներում, տոնավաճառներում, հիմնա-

կան և ոչ հիմնական շինություններում վաճառքի) թույլտվությամբ,

- համայնքի տարածքում բաղնիքներին (սաունաներին), հանրային սննդի, զվարճանքի օբյեկտներին՝ ժամը 24⁰⁰-ից հետո աշխատելու թույլտվության,
- համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության,
- համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության,
- համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու,
- համայնքի տարածքում (բացառությամբ՝ թաղային) մարդատար տաքսու (բացառությամբ՝ երթուղային) ծառայություն իրականացնելու թույլտվության համար:

Տեղական վճարները համայնքներում սահմանվում են՝

- համայնքի տարածքում շինարարության (շինության) արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար (տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար),
- տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար (տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար),
- տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար (մասնակիցներից վճար):

2.2.

Կարգավորման պարտադիր վճարներ

Կարգավորման պարտադիր վճարները օրենքով սահմանված Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարներ են:

Կարգավորման պարտադիր վճարներ վճարողներ են համարվում հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող և ծառայություն մատուցող անձինք, որոնց համար հանձնաժողովը սահմանում է կարգավորվող սակագներ: Հանձնաժողովը նաև սահմանում է վճարողների հաշվառման կարգը, հաստատում է վճարողների անվանական կազմը յուրաքանչյուր տարվա համար և իրականացնում է վճարողների հաշվառումը:

Վճարողները մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը կարգավորման պարտադիր վճարների հաշվետվությունները սահմանված ձևով ներկայացնում են հարկային մարմին:

Վճարողները օրենքով սահմանված կարգով հաշվարկված և հաստատված կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի 1/4 չափով վճարները վճարում են յուրաքանչյուր եռամսյակի առաջին ամսվա երեսունից (իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից) ոչ ուշ:

Հանրային ծառայությունների ոլորտում մեկից ավելի կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց կողմից վճարման ենթակա կարգավորման պարտադիր վճարները օրենքով սահմանված կարգով հաշվարկվում և պետական բյուջե են վճարվում յուրաքանչյուր գործունեության համար առանձին:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետությունում հաշվառված վճարողների կազմի և վճարողների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի (ինչպես նաև վճարողների եռամսյակային վճարների չափի) վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, ներկայացնում է Հարկային Պետական Ծառայություն:

Ստացված տեղեկատվությունը Հարկային Պետական Ճառայությունը 3-օրյա ժամկետում տրամադրում է վճարողների հաշվառման վայրի համապատասխան հարկային մարմին:

Պատասխանատվությունը

Կարգավորման պարտադիր վճարի վճարումները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված վճարի գումարի 0.15%-ի չափով (բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար):

Վճարողի կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունը սահմանված ժամկետից 2 ամսից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար վճարողից գանձվում է տուգանք՝ դրա հետևանքով չմուծված կարգավորման պարտադիր վճարի ընդհանուր գումարի 5%-ի չափով (բայց ոչ ավելի, քան այդ վճարի ընդհանուր գումարն է):

Օրենքով սահմանված հաշվետվությունները չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով այն վարելու համար վճարողներից գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով պետական բյուջե չմուծված կամ պակաս մուծված կարգավորման պարտադիր վճարի գումարի 10%-ի չափով:

Նախորդ ժամանակաշրջանների համար ներկայացված կարգավորման պարտադիր վճարի հաշվետվություններում վճարողների կողմից սխալներն ինքնուրույն հայտնաբերվելու դեպքում վճարողները կարող են հարկային մարմին ներկայացնել ճշգրտված հաշվետվություններ, որոնց հիման վրա հարկային մարմինը կատարում է այդ ժամանակաշրջանների համար պարտավորությունների վերահաշվարկ:

Հարկային մարմինների կողմից վճարողների մոտ իրականացվող ստուգումների ընթացքում վճարողի կողմից հարկային մարմիններ ներկայացված ստուգվող ժամանակաշրջանին վերաբերող հաշվարկների ճշտում չի իրականացվում:

Վճարողները պակաս ցույց տրված կարգավորման պարտադիր վճարի գումարը, ինչպես նաև հաշվարկված տույժերը և տուգանքները պետական բյուջե են վճարում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

Օրենքով սահմանված կարգով չվճարված կարգավորման պարտադիր վճարի գումարի վճարումն ապահովվում է դատական կարգով՝ հարկային մարմինների ներկայացրած հայցի հիման վրա:

3.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԵԺԻՄ

Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում:

Հարկերը վճարվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ պետական կամ համայնքների բյուջեներ:

Անհատ ձեռնարկատիրոջ կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը՝ ըստ հարկման ռեժիմների, պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝

- ընդհանուր հարկման ռեժիմում (այն ներառում է ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը, եկամտահարկը) հարկվող գործունեություն և հաստատագրված վճարներով հարկվող գործունեություն (այն պայմանավորված է օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների իրականացման հետ).
- պարզեցված հարկի ռեժիմում (որը փոխարինում է ընդհանուր հարկման ռեժիմին, մասնավորապես՝ ԱԱՀ-ին և եկամտահարկին) հարկվող գործունեություն և հաստատագրված վճարներով հարկվող գործունեություն:

Եթե հաստատագրված վճարներով հարկվող գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերը այլընտրանք չունի՝ նա պարտավոր է գործունեության այդ մասով վճարել հաստատագրված վճար, ապա գործունեության մնացած տեսակներով զբաղվելու դեպքում անհատ ձեռնարկատերը ունի ընտրության հնարավորություն՝ կամ ընդհանուր հարկման ռեժիմ, կամ պարզեցված հարկի ռեժիմ (եթե բավարարում է պարզեցված հարկ վճարող համարվելու համար օրենքով սահմանված պայմաններին):

3.1.

Ավելացված արժեքի հարկը

Ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: Ապրանքի արտադրության և իրացման կամ ծառայության մատուցման բոլոր փուլերում մաս առ մաս վճարվող ԱԱՀ-ի գումարը վերջին հաշվով գանձվում է այդ ապրանքը վերջնական սպառողից, որը սակայն պետության առջև ԱԱՀ-ի վճարման ամփոփական պարտականություն չի կրում՝ այդ պարտականությունը նա կրում է անուղղակիորեն՝ ապրանքը իրացնող կամ ծառայությունը մատուցող անձի միջոցով:

Անհատ ձեռնարկատերերը համարվում են ԱԱՀ վճարող այն գործարքների (գործառնությունների) մասով, որոնք ենթակա չեն պարզեցված հարկով կամ հաստատագրված վճարներով հարկման: Անհատ ձեռնարկատիրոջ համար ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող ԱԱՀ-ով հարկվող բոլոր գործարքների (գործառնությունների) արժեքը, եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝

- ա)** որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը (ընդ որում՝ ԱԱՀ-ով հարկման առումով ապրանքների մատակարարում չհամարվող ցանկացած գործարք (գործառնություն) համարվում է ծառայությունների մատուցում)։
- բ)** անհատույց կամ մասնակի հատուցմամբ ապրանքների հատկացումը կամ ծառայությունների մատուցումը այլ անձանց։
- գ)** «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծումը (բացառությամբ՝ օրենքով նախատեսված դեպքերի)։

Ապրանքների մատակարարման վայր է համարվում ապրանքների գտնվելու տեղը, որտեղից դրանք փաստացի մատակարարվում են:

Ապրանքները համարվում են մատակարարված Հայաստանի Հանրապետությունում, եթե դրանք առաքվել կամ հանձնվել են գնորդին (պատվիրատուին) Հայաստանի Հանրապետության տարածքում կամ արտահանվել են Հայաստանի Հանրապետությունից: Ներմուծված ապրանքները համարվում են մատակարարված Հայաստանի Հանրապետությունում դրանց ներմուծման պահից:

Ծառայությունները համարվում են մատուցված Հայաստանի Հանրապետությունում, եթե ծառայությունների մատուցման վայրը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Ծառայությունների մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ ծառայություն մատուցող անձը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, իսկ այդպիսի վայրի բացակայության կամ որոշման անհնարինության դեպքում՝ նշված անձի գտնվելու վայրը (բնակության վայրը): Նշվածից բացառություն են կազմում հետևյալ դեպքերը՝

- անշարժ գույքի հետ կապված ծառայությունների համար (այդ թվում՝ վարձակալության, առք ու վաճառքի գործակալների և փորձագետների ծառայությունների, շինարարության նախապատրաստման և իրականացման ծառայությունների) մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը կամ նախատեսվում է դրա կառուցումը,
- տրանսպորտային ծառայությունների համար մատուցման վայր է համարվում այն տեղը, որտեղից սկսվում է բեռների, փոստի, ուղևորների և ուղեբեռների փոխադրումը (միջազգային փոխադրումների մատուցման վայրը Հայաստանի Հանրապետության տարածքում չի գտնվում),
- օժանդակ տրանսպորտային ծառայությունների (ապրանքների բեռնումը, բեռնաթափումը, բեռների մշակումը, պահպանումը և այլ ծառայություններ), շարժական գույքի գնահատման, նորոգման, տեղակայման և համանման այլ ծառայությունների մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ այդ ծառայությունները փաստացի մատուցվել են,
- արտոնագրերի, լիցենզիաների, հեղինակային իրավունքի, ապրանքանշանների և համանման այլ իրավունքների՝ այլ անձանց փոխանցման, գովազդային, խորհրդատվական, ինժեներական, իրավաբանական, հաշվապահական, փորձագիտա-

կան, թարգմանչական և համանման այլ ծառայություններ, ինչպես նաև տվյալների մշակման, ծրագրային ապահովման իրականացման, տեղեկատվության հաղորդման ծառայություններ, շարժական գույքի վարձակալության (բացառությամբ՝ բոլոր տեսակների փոխադրամիջոցների վարձակալության) ծառայություններ օտարերկրյա իրավաբանական անձանց կամ օտարերկրյա ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված անհատ ձեռնարկատիրոջ կողմից (կամ հակառակը) մատուցման դեպքում ծառայության մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ ծառայությունն ստացող անձն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն կամ ունի մշտական հաստատություն, որին մատուցվում են նշված ծառայությունները, իսկ դրանց բացակայության դեպքում՝ նրա իրավաբանական հասցեն կամ բնակության վայրը,

- փոխադրամիջոցների վարձակալության դեպքում ծառայության մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ վարձատուն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն կամ դրա բացակայության դեպքում՝ նրա իրավաբանական հասցեն կամ բնակության վայրը:

ԱԱՀ-ով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում)

- պետական տուրքի գումարը,
- Կառավարության որոշմամբ տվյալ կոնկրետ անհատ ձեռնարկատիրոջ կողմից՝ ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց գործարքները, իսկ մասնակի հատուցմամբ գործարքների իրականացման դեպքում՝ օրենքով սահմանված կարգով որոշվող հարկվող շրջանառության և ստացված հատուցման տարբերությունը,
- հրապարակային պայմանագրերով սահմանված երաշխիքային ժամանակահատվածում իրացված ապրանքների իրացնողի կողմից անհատույց մատուցվող սպասարկման ծառայությունները, այդ ծառայությունների շրջանակներում սահմանված որակին չհամապատասխանող ապրանքների, դրանց կոմպլեկտավորող տարրերի անհատույց փոխարինումը, այն ապրանքների մատակարարումն ու ծառայությունների մատու-

յումը, որոնց արժեքը ներառված է հրապարակային պայմանագրերի համաձայն մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների արժեքում (այդ գործարքների մասով հարկվող շրջանառություն չի առաջանում և ձեռքբերումների գծով մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի հաշվանցման ենթակա գումարների վերահաշվարկներ չեն կատարվում):

Օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է **ԱԱՀ-ից ազատելու** դեպքերը: ԱԱՀ-ից ազատելը նշանակում է, որ հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ չի հաշվարկվում, իսկ այդ գործարքների հարկվող շրջանառության մասով ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները կամ միացվում են դրանց ձեռքբերման արժեքին, կամ արտադրության ու շրջանառության ծախսերին:

ԱԱՀ-ից, մասնավորապես, ազատված են.

- դպրոցական գրելու և նոտայի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների իրացումը, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների իրացումը,
- գիտահետազոտական աշխատանքները,
- անասնաբուժական դեղամիջոցների իրացումը, գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունում օգտագործվող բունաքիմիկատների, պարարտանյութերի, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմացուների և տնկանյութի իրացումը՝ գյուղատնտեսական արտադրանք արտադրողներին,
- արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումը,

Ուշադրություն. Արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումը, ինչպես նաև անասնաբուժական դեղամիջոցների իրացումը 2009թ. հունվարի 1-ից չեն հանդիսանում ԱԱՀ-ից ազատված:

- թերթերի և ամսագրերի իրացումը,
- մահվան և հուղարկավորության հետ կապված ծխական բնույթի այլ ծառայությունների մատուցումը և համապատասխան պարագաների իրացումը,
- Կառավարության կողմից սահմանված ցանկում նշված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի իրացումը,
- թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկերչական նշանակության կիսաֆաբրիկատների (ԱՏԳ ԱԱ ծածկագիր - 7106, 7108, 7109, 7110, 7113, 7115) իրացումը,
- մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի (գործունեության) իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարումն ու ծառայությունների մատուցումը,

***Ուշադրություն.** ՀՀ օրենսդրությամբ (այդ թվում՝ ՀՀ միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական բնույթի որոշում է Կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:*

- սպանդանույցներում մորթված գյուղատնտեսական կենդանիների (բացառությամբ թռչունների) մսի իրացումը:

Առանձին գործարքների (դրանք սահմանված են օրենքի 16-րդ հոդվածով) իրացման շրջանառության նկատմամբ կիրառվում է ԱԱՀ-ի գրոյակյան դրույքաչափ, այսինքն հարկ չի հաշվարկվում: Սակայն, ի տարբերություն հարկից ազատման դեպքի՝ այդ գործարքների մասով ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում (պակասեցվում) են անձի այլ հարկային պարտավորությունների հաշվին: ԱԱՀ-ի գրոյակյան դրույքաչափը կիրառվում է, մասնավորապես՝

- Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանից դուրս «արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով արտահանվող ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ, ինչպես նաև միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող օդանավերի լցավորման համար վա-

նելանյութի ու ամբողջ երթուղու ընթացքում օդանավերում անձնակազմի և ուղևորների սպառման համար նախատեսվող ապրանքների մատակարարման նկատմամբ.

- օդանավակայաններում մաքսային և անձնագրային հսկողության տարածքից հետո հատուկ առանձնացված վայրերում միջազգային երթուղիներով մեկնող ուղևորներին ապրանքների մանրածախ վաճառքի նկատմամբ, եթե այդ ապրանքները մինչև վաճառքի դրվելը անցել են մաքսային ձևակերպում ներքին տարածքից ապրանքների արտահանման համար մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով.
- միջազգային երթուղիներով փոխադրումներ իրականացնող փոխադրամիջոցների սպասարկման (ներառյալ աէրոնավիգացիոն, բռիչք-վայրեջքի), նորոգման, վերասարքավորման, ինչպես նաև միջազգային երթուղիներով փոխադրվող ուղևորների, ուղեբեռների, բեռների և փոստի սպասարկման ծառայությունների և փոխադրման ընթացքում ուղևորներին մատուցվող ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ.
- օտարերկրյա իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կամ օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից տրված հումքից, նյութերից ու կիսաֆաբրիկատներից իրենց պատվերով Հայաստանի Հանրապետության տարածքում այն արտադրանքի մշակման կամ հավաքման, շարժական գույքի նորոգման, արդիականացման և համանման այլ ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, որոնք արտահանվում են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանից դուրս՝ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում.
- այն ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, որոնց մատուցման վայրը, համաձայն օրենքի, չի գտնվում Հայաստանի Հանրապետության ներքին տարածքում:

ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20%՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ: Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ՝ 20% դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16,67% հաշվարկային դրույքաչափով:

ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը (իրացման շրջանառությունը) որոշվում է հետևյալ կարգով՝

- 1) ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքերում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց արժեքը դրամական արտահայտությամբ (ներառյալ՝ այդ արժեքին օրենքով միացվող այլ վճարումները)՝ առանց ԱԱՀ-ի, որը գնորդը պետք է վճարի մատակարարին որպես հատուցում.

***Ուշադրություն.** Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի արժեքը չի ներառվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ, բացառությամբ ապրանքների արտահանման դեպքերի, ինչպես նաև այն դեպքի, երբ տարան իրացնում է անմիջական արտադրողը կամ ներմուծողը:*

- 2) անհատ ձեռնարկատերերի կողմից մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով վերամշակման կամ նորոգման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանված ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց վերամշակման կամ նորոգման արժեքը, որը որպես հատուցում պետք է վճարվի օտարերկրյա իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններին կամ օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, իսկ այդ արժեքի որոշման անհնարինության դեպքում՝ ապրանքների վերամշակումից կամ նորոգումից հետո ներմուծման մաքսային արժեքի և դրանց արտահանման ժամանակ հայտարարագրված մաքսային արժեքի տարբերությունը.
- 3) հանձնարարության, կոմիսիայի և գործակալության հիմունքներով ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքում հարկվող շրջանառություն է համարվում միջնորդավճարը (գանձույթ, պարգևավճար և հատուցման համանման այլ ձևեր)՝ առանց ԱԱՀ-ի, եթե օրենքով կամ այլ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ.
- 4) ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների)

համար սովորականի համեմատ կիրառվում են իրական արժեքից էականորեն ցածր գներ (մասնակի հատուցում), հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ օրենքին համապատասխան որոշվող մեծությունը (գործարքի արժեքը, վճարի, վարձատրության, պարգևի կամ այլ դրամական հատուցման մեծությունը), իսկ դրա բացակայության դեպքում՝ գործարար շրջանակներում համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծությունը (գործարքի իրական արժեքը)։

- 5) փոխանակման գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը որոշվում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար օրենքով սահմանված կարգով՝ հիմք ընդունելով այդ ապրանքների մատակարարման ու ծառայությունների մատուցման պահին դրանց սովորաբար կիրառվող գինը՝ առանց ԱԱՀ-ի։
- 6) ակցիզային հարկով հարկվող ապրանքների մատակարարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ ներառվում է նաև ակցիզային հարկի գումարը։

ԱԱՀ-ով հարկվող գործարք (գործառնություն) իրականացնելու դեպքում անհատ ձեռնարկատերը դուրս է գրում **հարկային հաշիվ**։ Հարկային հաշիվն իրենից ներկայացնում է ապրանքների մատակարարումը կամ ծառայությունների մատուցումը հավաստող փաստաթուղթ, որտեղ նշվում են՝

- ա) հաշվի հերթական համարը և դուրսգրման ամսաթիվը։
- բ) ապրանք առաքող կամ ծառայություն մատուցող անձի անունը և ազգանունը, բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)։
- գ) ապրանքներ կամ ծառայություններ ստացող անձի անվանումը և իրավաբանական հասցեն, ֆիզիկական անձի անունը և ազգանունը, բնակության վայրը։
- դ) ապրանքների անվանումը և քանակը կամ ծառայությունների տեսակը և ծավալը։

ե) ապրանքների գինը և ընդհանուր արժեքը կամ մատուցվող ծառայությունների սակագինը և հատույման ընդհանուր գումարը՝ առանց ԱԱՀ-ի.

զ) հաշվարկված ԱԱՀ-ի գումարը (առանձին տողով).

է) ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջներով նախատեսված այլ տեղեկություններ և վավերապայմաններ:

Առևտրի և սպասարկման ոլորտներում գործունեություն իրականացնող անձի կողմից տրված ապրանքների (մատուցված ծառայությունների) գնման չեկերը (կտրոնները) չեն դիտվում որպես հարկային հաշիվ:

Ուշադրություն. Օրենքով սահմանված կարգի խախտումով հարկային հաշիվների լրացման համար վճարողներից գանձվում է տուգանք՝ այդ փաստաթղթերում հաշվարկված ԱԱՀ-ի 10%-ի չափով:

Անհատ ձեռնարկատերը (հարկման ռեժիմից անկախ) հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո, մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը (ներառյալ), իր հաշվառման վայրի հարկային մարմին սահմանած կարգով ներկայացնում է *Տեղեկություններ*՝ հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվների և իր կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված (գնորդներին տրված) հարկային հաշիվների վերաբերյալ: Ընդ որում՝ այդ տեղեկություններում ներառվում է *տեղեկություններ* միայն այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնցում տվյալ անձին հարկային հաշիվ տրամադրած կամ նրանից հարկային հաշիվ ստացած անձին համար տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ստացված կամ տրամադրված հաշիվներում ներառված հարկվող շրջանառության արժեքը գերազանցում է 100,0 հազ. դրամը (առանց անուղղակի հարկերի):

Հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ներառման ենթակա՝ ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի այն գումարները, որոնք չեն արտացոլվել ներկայացված տեղեկություններում կամ որոնց վերաբեր-

յալ տեղեկություններ չեն ներկայացվել, ենթակա չեն հաշվանցման այդ հաշվետու ժամանակաշրջանում, սակայն կարող են հաշվանցվել այդ տեղեկությունները ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանում, եթե այդ տեղեկությունները չեն վերաբերում հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված ժամանակաշրջաններում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներին:

Ուշադրություն. Հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ապրանքների մատակարարման կամ ձեռքբերման և ծառայությունների մատուցման կամ ստացման գծով ԱԱՀ-ի գումարները չներառելու (չներկայացնելու) դեպքում տեղեկությունները ներկայացնող անձը վճարում է տուգանք՝ սխալ ներկայացված յուրաքանչյուր տեղեկության (հարկային հաշվի) համար 5,0 հազ. դրամի չափով:

Ինչպես արդեն նշվեց, ԱԱՀ-ն անուղղակի հարկ է և հաշվարկվում է ապրանքների վաճառքի կամ ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքից, որից հաշվանցվում է այդ ապրանքների և ծառայությունների ձեռք բերման գնի մեջ եղած ԱԱՀ-ի գումարը:

Այդ հաշվարկը հետևյալն է.

- հաշվետու ժամանակաշրջանում (դա կարող է լինել ամիս կամ եռամսյակ) ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման բոլոր գործարքներից հաշվարկվում է ամբողջ ԱԱՀ-ն (**Կրեդիտ ԱԱՀ**),
- հաշվետու ժամանակաշրջանում (դա կարող է լինել ամիս կամ եռամսյակ) հաշվարկվում է ապրանքների կամ ծառայությունների ձեռք բերման բոլոր գործարքների հարկային հաշիվներում (մաքսային հայտարարագրերում) առանձնացված ամբողջ ԱԱՀ-ն (**Դեբետ ԱԱՀ**),
- **Կրեդիտ ԱԱՀ-ից** հանվում է **Դեբետ ԱԱՀ-ն**,
- արդյունքում՝ ԱԱՀ-ի գումարն է, որը պետք է վճարել պետական բյուջե:

Այսպիսով՝

Հաշվարկված ԱԱՀ = Կրեդիտ ԱԱՀ - Դեբետ ԱԱՀ

Դեբետ ԱԱՀ = Ներքին դեբետ + Ներմուծման դեբետ

Որոշ դեպքերում արդյունքը կարող է լինել բացասական, որը կմարվի հաջորդ հաշվետու ժամանակաշրջաններում ապրանքների

մատակարարման կամ ծառայությունների մատուցման գործարքներից հաշվարկված ԱԱՀ-ի հաշվին:

Ապրանքների կամ ծառայությունների ձեռք բերման գործարքների հարկային հաշիվներում (մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցման համար սահմանվում են մի շարք պայմաններ: Համաձայն օրենքի, մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցման համար անհրաժեշտ է, որպեսզի՝

- ձեռքբերումը կատարված լինի արտադրական և այլ առևտրային նպատակներով,
- ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը ձեռք բերվի միայն հաշվետու ժամանակաշրջանում,
- ձեռքբերումների գծով ստացված հարկային հաշիվները լրացվեն «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վավերապայմաններին համապատասխան,
- այդ ձեռքբերումների դիմաց վճարումները կատարված լինեն բանկային փոխանցմամբ:

Պետք է նկատի ունենալ, որ ԱԱՀ-ից ազատված ձեռքբերումների գծով ստացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները չեն կարող օգտագործվել հաշվանցման համար, այսինքն՝ հաշվանցել կարելի է միայն այն ձեռքբերումների գծով վճարված ԱԱՀ-ի գումարները, որոնք կատարվել են ԱԱՀ-ով հարկվող գործարքների իրականացման համար: Եթե անհատ ձեռնարկատերն իրականացնում է ԱԱՀ-ով հարկվող և հարկումից ազատված գործունեություն, ապա նա պետք է վարի դրանց առանձնացված հաշվառում (այդ թվում՝ նշված գործունեությունների համար ձեռք բերումների մասով):

Այն դեպքում, երբ ձեռք բերումների մասով հնարավոր չէ իրականացնել առանձնացված հաշվառում, ապա հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը որոշվում է հետևյալ կերպ՝ նախ որոշվում է ընդհանուր գործարքների մեջ հարկվող գործարքների տեսակարար կշիռը, ապա հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը հաշվարկվում է այդ տեսակարար կշիռն համապատասխան:

ԱԱՀ-ի հաշվարկները ներկայացվում և վճարումները բյուջե կատարվում են հետևյալ ժամկետներում՝

ա) այն անհատ ձեռնարկատերերի համար, որոնց նախորդ տարվա եկամուտները չեն գերազանցել 60,0 մլն. դրամը, հաշվետու ժամանակաշրջան է համարվում եռամսյակը: Եռամսյակը ավարտվելուց հետո, մինչև այդ եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը պետք է ներկայացվի ԱԱՀ-ի հաշվարկ և հաշվարկով արտացոլված գումարը վճարվի պետական բյուջե:

բ) այն անհատ ձեռնարկատերերի համար, որոնց նախորդ տարվա եկամուտները գերազանցել են 60,0 մլն. դրամը, հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը: Ամիսը ավարտվելուց հետո, մինչև այդ ամսին հաջորդող ամսվա 20-ը պետք է ներկայացվի ԱԱՀ-ի հաշվարկ և հաշվարկով արտացոլված գումարը վճարվի պետական բյուջե:

Անհատ ձեռնարկատերերի կողմից գործունեության դադարեցման դեպքում ձեռնարկատիրական գործունեության օբյեկտների մնացորդների մասով (այդ թվում՝ ապրանքների, արտադրանքի, մտավոր սեփականության օբյեկտների), այլ գույքային իրավունքների գծով ձեռքբերումների դիմաց վճարված (հարկային հաշիվներում կամ մաքսային փաստաթղթերում առանձնացված) և մինչև գործունեության դադարեցումը հաշվանցված ԱԱՀ-ի գումարների չափով առաջանում է լրացուցիչ հարկային պարտավորություն:

3.2.

Ակցիզային հարկը

Ակցիզային հարկը որոշ տեսակի ապրանքների ներմուծման կամ Հայաստանի Հանրապետության տարածքում այդ ապրանքներն արտադրողների կողմից դրանց օտարման համար «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է:

Հայաստանի Հանրապետությունում ակցիզային հարկ վճարում է այն անհատ ձեռնարկատերը, որը հանդիսանում է ներքոհիշյալ ապրանքները ներմուծող կամ արտադրող (ներառյալ՝ շալկանող կամ այլ կերպ տարայավորող)։

- գարեջուրը, խաղողի և այլ գինիները, գինենյութը, սպիրտը և սպիրտային խմիչքները,

- ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարետլաները և սիգարետոները (ծխախոտով կամ դրա փոխարինիչներով),
- բենզինը, հում նավթը և նավթամթերքները, նավթային գազերը և գազանման այլ ածխաջրածինները (բալաստությամբ՝ բնական գազի):

Ենթակցիկային հիմնական արտադրատեսակների ակցիզային հարկի դրույթաչափերն են՝

Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ	Ապրանքախմբի անվանումը	Շարժման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույթաչափը (դրամ)
2203	Գարեջուր	1 լիտր	70
2204	Խաղողի և այլ գինիներ, գինեմուրթ	բալթոլման գնի (առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի), իսկ ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	10% (բայց ոչ պակաս, քան 1 լ համար 100 դր.)
2205	Վերմուտ և խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական և արոմատիկ էքստրակտներ	1 լիտր	500
2206	Խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (փանձի սիդր) մեղրաըմպելիք)	1 լիտր	180
2207	Էթիլային սպիրտ	1 լիտր (100% սպիրտի վերահաշվարկով)	600
2208	Սպիրտային խմիչքներ	բալթոլման գնի (առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի), իսկ ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	30% (բայց ոչ պակաս, քան 1 լ համար 380 դր.)

2403	Ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կիլոգրամ	1500
2709	Հում նավթ և նավթամթերքներ	1 տոննա	27000
2711 (բացառությամբ 2711 11 և 2711 21)	Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ (բացառությամբ՝ բնական գազի)	1 տոննա	1000

Ակցիզային հարկով հարկվող օբյեկտ է համարվում՝

- «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ենթաակցիզային ապրանքների ներմուծումը Հայաստանի Հանրապետության տարածք,
- Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրողների (ներառյալ՝ շշալցողների կամ այլ կերպ տարայավորողների) կողմից ենթաակցիզային ապրանքների օտարումը (այդ թվում՝ անհատույց):

Ենթաակցիզային ապրանքների համար հարկման բազա է համարվում ապրանքների քանակը (ծավալը)՝ արտահայտված օրենքով սահմանված չափման բնափրային միավորներով, որի նկատմամբ օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է ակցիզային հարկի գումարը:

Ենթաակցիզային հետևյալ ապրանքներն ենթակա են ակցիզային դրոշմանիշներով պարտադիր դրոշմավորման՝ Կառավարության 26.10.1999թ. «Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր մմուշի դրոշմանիշներով դրոշմավորման մասին» N 662 որոշմանը համապատասխան.

Արտադրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ	Ապրանքի անվանումը
2204, 2205, 2206	խաղողի և այլ գինիներ
2207	եթիլային սպիրտ
2208	սպիրտային խմիչք
2402	ծխախոտի արտադրանք

Գրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձինք ակցիզային դրոշմանիշերը ձեռք են բերում հարկային տեսչություններից՝ մինչև այդ ապրանքների սահմանված կարգով իրացումը:

Հայաստանի Հանրապետությունում արտադրված դրոշմավորման ենթակա էթիլային սպիրտի արտադրանքի համար նախատեսված ակցիզային յուրաքանչյուր դրոշմանիշի ձեռքբերման համար վճարվում է 100 դրամ, ոգելից խմիչքի արտադրանքի համար 50 դրամ, ծխախոտի արտադրանքի համար 25 դրամ:

Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքներ արտադրողների համար պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի կանխավճար:

Ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար հարկային տեսչություններ ներկայացվում են՝

- ա) սահմանված ձևով դիմում՝ 2 օրինակից.
- բ) ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարը հաստատող փաստաթղթերի բնօրինակը և դրա պատճենը (բնօրինակը վերադարձվում է, իսկ պատճենը պահվում է հարկային տեսչությունում).
- գ) հաշվարկ ակցիզային դրոշմանիշերի օգտագործման վերաբերյալ.
- դ) պարտադիր՝ օղի արտադրողների (ներառյալ՝ շշալցում իրականացնողների) կողմից որպես հումք ձեռք բերված սպիրտի ձեռքբերման հաշվարկային փաստաթղթերի օրինակները.
- ե) լիցենզիայի և տարեկան պետական տուրքի վճարման անդորրագրի ու համապատասխանության սերտիֆիկատի (պարտադիր լինելու դեպքում) պատճենները:

Հարկային տեսչություններն ակցիզային դրոշմանիշերը տրամադրում են նշված բոլոր փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում: Ակցիզային դրոշմանիշեր չեն տրամադրվում, եթե դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ակցիզային հարկի գծով գերավճարը քիչ է պահանջվող դրոշմանիշերի համար վճարման ենթակա գումարից կամ արտադրական հզորությունները չեն համապատասխանում պահանջվող դրոշմանիշերի քանակին: Այս դեպքում հայտը կարող է բավարարվել մասնակի՝ գերավճարված գումարի քանակով:

ճարի գումարին կամ արտադրական հզորություններին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունում ենթաակցիզային ապրանքներ արտադրողների կողմից Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերված կամ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ակցիզային հարկով հարկված հումքի դիմաց օրենքին համապատասխան վճարված ակցիզային հարկի գումարը՝

- ա) այդ հումքից պատրաստված՝ ենթաակցիզային ապրանքների արտահանման դեպքում ենթակա է վերադարձման՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
- բ) պակասեցվում է դրանց համար դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի հիման վրա՝ հաշվետու ժամանակաշրջանում վճարման ենթակա ակցիզային հարկի ընդհանուր գումարից՝ ենթաակցիզային ապրանքների իրացմանը համամասնորեն:

Ուշադրություն. Հայաստանի Հանրապետությունում ենթաակցիզային ապրանքներ արտադրողների կողմից ձեռք բերված կամ ներմուծված ակցիզային հարկով հարկված հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի գումարի՝ այդ հումքից պատրաստված ենթաակցիզային ապրանքների համար հաշվարկված ակցիզային հարկի գումարը գերազանցող մասը հաշվանցյան կամ վերադարձման ենթակա չէ:

Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների համար հարկ վճարող (հարկի վճարման պարտավորություն կրող) անհատ ձեռնարկատերերի համար ակցիզային հարկի գծով հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար՝ մինչև դրան հաջորդող ամսվա 15-ը, վճարվում է ակցիզային հարկը և համապատասխան տարածքային հարկային տեսչություն է ներկայացվում սահմանված ձևով ակցիզային հարկի Հաշվարկ:

Հարկ վճարողի կողմից ակցիզային հարկի գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման և սահմանված կարգով դրանց ճշգրտման արդյունքներով կարող են ներկայացվել ճշտգրտված հաշվարկներ, ընդ որում յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի ճշգրտված մեկից ավելի յուրաքանչյուր հաշվարկի ներկայացման դեպքում հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ 200 հազար դրամի չափով:

3.3.

Եկամտահարկը

«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն անհատ ձեռնարկատերը ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից եկամտահարկը հաշվարկում և վճարում է ինքնուրույնաբար՝ «Ֆիզիկական անձի տարեկան եկամուտների» Հայտարարագրի հիման վրա: Ընդ որում՝ Հայտարարագրով հաշվարկված եկամտահարկն (անմիջականորեն անհատ ձեռնարկատիրոջ եկամտահարկ) անհրաժեշտ է տարանջատել անհատ ձեռնարկատիրոջ որպես հարկային գործակալ հաշվարկվող, պահվող (զանձվող) և բյուջե փոխանցվող եկամտահարկից (այլ անձանց եկամտահարկ):

Անհատ ձեռնարկատիրոջ եկամտահարկով հարկման առանձնահատկությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ նա միաժամանակ հանդիսանում է և տնտեսավարող սուբյեկտ, և ֆիզիկական անձ: Հայտարարագրում անհատ ձեռնարկատերը ներառում է հարկային տարվա ընթացքում ինչպես ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները, այնպես էլ որպես ֆիզիկական անձ ստացած այն եկամուտները, որոնք օրենքով սահմանված դեպքերում չեն հարկվել եկամտի վճարման աղբյուրի մոտ Հայաստանի Հանրապետության հարկային գործակալների միջոցով: Հարկային գործակալների միջոցով հարկված եկամուտները (օրինակ՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձի որպես վարձու աշխատող ստացած աշխատավարձը) չեն ներառվում Հայտարարագրում՝ այդ եկամուտների մասով հարկային գործակալների պահած եկամտահարկը հանդիսանում է հարկի վերջնական գումար և վերահաշվարկման ենթակա չէ: Միաժամանակ՝ անհատ ձեռնարկատիրոջ օտարերկրյա պետություններում ստացված եկամուտները (օրինակ՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձի որպես վարձու աշխատող ստացած աշխատավարձը), նույնիսկ եթե դրանք հարկվել են եկամտի վճարման աղբյուրի մոտ տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան, ներառվում են Հայտարարագրում և եկամտահարկը հաշվարկվում է ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների հետ միասնականացված՝ տարեկան հարկվող եկամտի գումարից:

Տարեկան հարկվող եկամուտը անհատ ձեռնարկատիրոջ տվյալ հաշվետու տարվա համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությունն է.

Հարկվող եկամուտ = Համախառն եկամուտ – Նվազեցումներ:

Համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում անհատ ձեռնարկատիրոջ ստացած եկամուտների հանրագումարն է՝ անկախ ստացման աղբյուրներից (բացառությամբ՝ հարկային գործակալների միջոցով հարկված եկամուտների):

***Ուշադրություն.** Եկամուտ չեն համարվում և համախառն եկամտի մեջ չեն ներառվում՝ պետական նպաստները (բացառությամբ՝ ժամանակավոր անաշխատունակության և ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստների), բոլոր տեսակի կենսաթոշակները; գոհված զինծառայողի ընտանիքի անդամին և հաշմանդամ դարձած զինծառայողին տրվող միանվագ վճարները; ալիմենտները; արյուն ու կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ստացված գումարները:*

Անհատ ձեռնարկատիրոջ կողմից արտարժույթով ստացված եկամուտները վերահաշվարկվում են հայկական դրամով՝ ելնելով ստացման օրը Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքից:

Բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները համախառն եկամտում հաշվի են առնվում պետական հաստատագրված (կարգավորվող) գներով, իսկ դրանց բացակայության դեպում՝ ազատ (շուկայական) գներով Կառավարության 02.07.2001թ. «Բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները ֆիզիկական անձանց համախառն եկամտում հաշվի առնելու կարգը հաստատելու մասին» N 590 որոշմանը համապատասխան:

Ձեռնարկատիրական գործունեության մասով անհատ ձեռնարկատերը պարտավոր է կիրառել հաշվառման հաշվեգրման եղանակը, այսինքն՝ ելնելով իր կողմից եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից: Հաշվեգրման եղանակով եկամուտները հաշվառելիս անհատ ձեռնարկատերը հաշվի է առնում հետևյալ առանձնահատկությունները՝

ա) եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված, եթե համապատասխան գումարը ենթակա է անհատ ձեռնարկատիր-

րոջն անվերապահ վճարման (հատուցման), կամ նա կատարել է գործարքից կամ պայմանագրից բխող պարտավորությունները, եթե նույնիսկ այդ իրավունքի բավարարման պահը հետաձգվել է, կամ վճարումներն իրականացվում են մաս-մաս.

- բ) անհատ ձեռնարկատիրոջ կողմից ծառայություններ մատուցելու դեպքում նշված իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքից բխող ծառայությունների մատուցումն ավարտելու (այդ թվում նաև՝ ըստ փուլերի) պահից.
- գ) անհատ ձեռնարկատիրոջ կողմից տոկոսների տեսքով կամ գույքը վարձակալության տալու դիմաց եկամուտներ ստանալու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված՝ պարտքի կամ վարձակալական պայմանագրի ժամկետը լրանալու պահից (եթե պարտքի կամ վարձակալության պայմանագրի ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջաններ, ապա հաշվետու ժամանակաշրջանում եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան):

Համախառն եկամտից կարող են կատարվել հետևյալ նվազեցումները՝ նվազեցվող եկամուտներ, անձնական նվազեցումներ և ծախսեր: Միևնույն գումարը համախառն եկամտից կարող է նվազեցվել միայն մեկ անգամ:

$$\text{Նվազեցումներ} = \text{Նվազեցվող եկամուտներ} + \text{Անձնական նվազեցում} + \text{Ծախսեր}$$

Ուշադրություն. Համախառն եկամուտը նվազեցվում է նաև անձի հաշվին կատարվող կենսաթոշակային, զբաղվածության, սոցիալական ապահովագրության պարտագրության (այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովագրության) վճարների գումարի չափով, ոչ առևտրային կազմակերպություններին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք, դրամական միջոցներ), նրանց մատուցած ծառայությունների արժեքի չափով (բայց ոչ ավել հարկվող եկամտի 5%-ից):

Համախառն եկամտից **նվազեցվող եկամուտները** սահմանված են «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով և այդ եկամուտները չեն ներառվում Հայտարարագրում:

Օրինակ՝ հարկվող եկամուտը որոշելիս գյուղատնտեսական արտադրությամբ զբաղված անհատ ձեռնարկատիրոջ մոտ համախառն եկամուտը նվազեցվում է գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի չափով, ինչպես նաև այլ գործունեությունից ստացված եկամուտների չափով, եթե վերջինիս տեսակարար կշիռը գյուղատնտեսական և այլ գործունեությունից ստացված եկամտի մեջ չի գերազանցում 10%-ը:

Ուշադրություն. Գյուղատնտեսական արտադրանք է համարվում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող՝

- *հացահատիկային և հացահատիկատոռային մշակաբույսերը,*
- *տեխնիկական մշակաբույսերը,*
- *պալարապտղային, բանջարային, բոստանային մշակաբույսերը և փակ գրունտի արտադրանքը,*
- *դաշտային մշակման կերային մշակաբույսերը,*
- *կերարտադրության այլ արտադրանքը,*
- *պարտեզների, խաղողի այգիների, բազմամյա տնկիների և ծաղկաբուծության արտադրանքը,*
- *ծառերի և թփերի սերմերը, պտուղներում եղած սերմերը,*
- *ծառերի և թփերի սածիլները, տնկիները,*
- *անասնաբուծության արտադրանքը,*
- *խոզաբուծության արտադրանքը,*
- *ոչխարաբուծության և այծաբուծության արտադրանքը,*
- *թռչնաբուծության արտադրանքը,*
- *ձիաբուծության, էշաբուծության և ջորիաբուծության արտադրանքը,*
- *եղջերվաբուծության և ուղտաբուծության արտադրանքը,*
- *ճագարաբուծության, մորթատու գազանաբուծության և որսորդական տնտեսության արտադրանքը,*
- *ձկնաբուծության, մեղվաբուծության, շերամաբուծության, արհեստական սերմնավորման արտադրանքը:*

Գյուղատնտեսական արտադրանքի գծով ստացված եկամտի ճշգրիտ հաշվարկման անհնարիության դեպքում այն հաշվարկվում է՝ հիմնվելով կադաստրային գուտ եկամտի տվյալների վրա:

Անձնական նվազեցման չափը կազմում է 20,0 հազ. դրամ՝ եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար:

Ուշադրություն. Եթե անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարում հարկային մարմնին չի ներկայացրել գործունեություն չիրականացնելու մասին հայտարարություն, այսինքն՝ նրա ձեռնարկատիրական գործունեությունն իրականացվել է ամբողջ տարվա ընթացքում, տարեկան եկամուտների հայտարարագրով անձնական նվազեցման գումարը կազմում է 240,0 հազ. դրամ (20,0 հազ. դրամ × 12 ամիս):

Ձեռնարկատիրական գործունեությունից հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների գծով անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված **ծախսերի** չափով:

Անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, շուկայում առաջխաղացման և (կամ) ապրանքների (ծառայությունների) իրացման, խորհրդատվական և իրավաբանական ծառայությունների, ուղեկցման, երաշխիքային հսկողության և շահագործման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, արտադրության (շինարարության) նախապատրաստման, յուրացման և կոնսերվացման, գույքի պահպանման համար անհատ ձեռնարկատիրոջ կատարած ծախսերը, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսերը: Ընդ որում՝ անհատ ձեռնարկատիրոջ կողմից կատարված ծախսերը (այդ թվում՝ էլեկտրաէներգիայի, կապի և կոմունալ այլ ծախսերը) համարվում են ձեռնարկատիրական գործունեության գծով փաստաթղթերով հիմնավորված ծախսեր, եթե այդ ծախսերը կատարվել են որպես անհատ ձեռնարկատեր և պահպանվել են ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ օրենսդրությամբ ներկայացվող պահանջները:

Ծախսերի թվին են դասվում՝ նյութական ծախսերը, ամրոտիզացիոն մասհանումները, վարձավճարները, ապահովագրական վճարները, տուրքերը և պարտադիր այլ վճարները, վարկերի և փոխառությունների տոկոսները, բանկային ծառայությունների համար վճարները, գովազդային ծախսերը, ներկայացուցչական ծախսերը, դատական ծախսերը, գործուղման ծախսերը, պատճառած վնասի հատույումը, տուժանքները (տույժեր, տուգանքներ), աուդիտորական, իրա-

վարանական, խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների ծախսերը:

Ուշադրություն. Անհատ ձեռնարկատիրոջ կողմից իրականացրած ձեռնարկատիրական գործունեության գծով առևտրային կազմակերպությունների համար «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված նորմերը կիրառվում են՝

- ամորտիզացիոն մասհանումների և այլ ծախսերի հաշվարկման մասով,
- համախառն եկամտից չնվազեցվող ծախսերի, ծախսատեսակների համար ՀՀ կառավարության 27.11.1998թ. «Հարկման նպատակով համախառն եկամտից իրականացվող նվազեցումների որոշ տեսակների առավելագույն թույլատրելի չափեր սահմանելու մասին» N 753 որոշմամբ սահմանված նորմաների մասով,
- համախառն եկամտից ծախսերի նվազեցման իրականացման մասով,
- ձեռնարկատիրական գործունեությունից ստացված հաշվետու տարվա վնասների մասով:

Հիմնական միջոցների համար ամորտիզացիոն մասհանումները հաշվարկվում են՝ ելնելով ամորտիզացիոն նվազագույն ժամկետներից:

Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարը հաշվարկվում է՝ ելնելով հիմնական միջոցների տվյալ խմբի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետներից.

Հիմնական միջոցների խումբը	Ամորտիզացիոն նվազագույն ժամկետը (տարի)
Շենքերի, շինությունների և փոխանցող հարմարանքների համար	20 տարի
Հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների, շենքերի և շինությունների համար	10 տարի
Հոսքային գծերի, ռոբոտափեխանիկայի համար	3 տարի
Հաշվողական և համակարգչային փեխանիկայի համար	1 տարի
Այլ հիմնական միջոցների, այդ թվում՝ բանոց անատուների, բազմամյա տնկիների և հողերի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների համար	5 տարի

Մինչև 50,0 հազ. դրամ արժողությամբ հիմնական միջոցների, ինչպես նաև արդեփոք գտնում գտնվող շենքերի և շինությունների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է 1 տարի:

Հարկման նպատակով անհատ ձեռնարկատերն իր հայեցողությամբ կարող է ընտրել հիմնական միջոցների ամորտիզացիոն այլ ժամկետ, սակայն տվյալ խմբի համար վերոհիշյալ ժամկետներից ոչ պակաս: Ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես հիմնական միջոցի սկզբնական (ձեռքբերման) արժեքի և հիմնական միջոցի տվյալ խմբի համար սահմանված ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն:

Ոչ նյութական ակտիվների համար ամորտիզացիոն մասհանումները հաշվարկվում են՝ ելնելով ամորտիզացիոն նվազագույն ժամկետներից: Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է անհատ ձեռնարկատերը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջիններիս որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է 10 տարի (սակայն ոչ ավելի անհատ ձեռնարկատիրոջ գործունեության ժամկետից): Ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես ոչ նյութական ակտիվի սկզբնական (ձեռքբերման) արժեքի և այդ ոչ նյութական ակտիվի համար սահմանված ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն:

Կառավարության կողմից սահմանված նորմաների (չափերի) սահմաններում համախառն եկամտից նվազեցվում են, մասնավորապես, հետևյալ ծախս(ատեսակն)երը՝

- ա) վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար կատարված վճարները.
- բ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գովազդի, մարքեթինգի և կադրերի (վերա)պատրաստման ծախսերը.
- գ) հատուկ սննդի համար կատարված ծախսերը.
- դ) արտահագուստի և այլ հանդերձանքի համար կատարված ծախսերը.
- ե) գործուղման (այդ թվում՝ առանց հիմնավորող փաստաթղթերի օրապահիկի) ծախսերը.
- զ) ներկայացուցչական ծախսերը:

Համախառն եկամտից նշված ծախսերը (ծախսատեսակները) նվազեցնելու համար Կառավարության սահմանած նորմաները հաշվարկվում են ելնելով ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից:

Հարկման նպատակով գույքը և պարտավորությունները հաշվի են առնվում սկզբնական (ձեռքբերման) արժեքով: Ընդ որում՝

- ա) արտադրանքի արտադրության և ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են տվյալ արտադրանքի և ծառայությունների իրացմանը համապատասխան:
- բ) առևտրային գործունեություն իրականացնող հարկատուների մոտ ապրանքների ձեռքբերման արժեքի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այդ ապրանքների իրացմանը համապատասխան:
- գ) գույքի այլ տեսակների արժեքի (մասնավորապես, նյութական ռեսուրսների համար՝ ձեռքբերման, իսկ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների համար՝ մնացորդային արժեքի) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են դրանց իրացմանը համապատասխան:
- դ) անհատ ձեռնարկատիրոջ գործունեության հետ կապված ընդհանուր տնտեսական ծախսերի, արտադրանքի և ծառայությունների իրացման հետ կապված ծախսերի, ոչ արտադրական այլ ծախսերի, տոկոսների, վարձավճարների և նմանատիպ այլ ծախսերի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են:
- ե) նախորդ տարիներում պակաս ցույց տրված ծախսերի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են դրանց հայտնաբերման տարվա ընթացքում:

Ուղղակի տնտեսական ծախսեր են համարվում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերը, իսկ ընդհանուր տնտեսական ծախսեր են համարվում ձեռնարկատիրական գործունեության հետ կապված վարչական և ուղղակի տնտեսական ծախսերին չվերաբերվող այլ ծախսերը:

Հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է անհատ ձեռնարկատիրոջ մոտ նախորդ տարիներին առաջացած վնասների չափով: Անհատ ձեռնարկատիրոջ ձեռնարկատիրական գործունեությունից վնասը օրենքով սահմանված ծախսերի գերազանցումն է ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների նկատմամբ: Հաշվետու և նախորդող տարիներին ձեռնարկատիրական գործունեությունից վնաս ունենալու դեպքում այն փոխանցվում է վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ և կարող է նվազեցվել միայն ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից (այսինքն՝ չի նվազեցվում վնասի առաջացման և հաջորդող տարիներին ստացված այլ եկամուտներից):

Ուշադրություն. Հարկային մարմին ներկայացված տարեկան եկամուտների մասին հայտարարագրում հաշվարկված հարկային վնասն ավելի ցույց տալու դեպքում անհատ ձեռնարկատերից գանձվում է տուգանք՝ ավելի ցույց տրված հարկային վնասի 20%-ի չափով:

Անհատ ձեռնարկատիրոջ տարեկան հարկվող եկամտից եկամտահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Տարեկան հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 960,0 հազ. դրամ	Հարկվող եկամտի 10%
960,0 հազ. դրամից ավելի	96,0 հազ. դրամին գումարած 960,0 հազ. դրամը գերազանցող գումարի 20%

Տարվա ընթացքում անհատ ձեռնարկատերը կատարում է **եկամտահարկի եռամսյակային վճարումներ** յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ՝ նախորդ տարվա ձեռնարկատիրական գործունեությունից հաշվարկված եկամտահարկի գումարի 1/6-ի (կանխավճար) և նախորդ եռամսյակում եկամտահարկի նվազագույն գումարի հաշվարկման բազայի նկատմամբ 1% դրույքաչափով հաշվարկված գումարի (եկամտահարկի նվազագույն վճար) առավելագույնի չափով:

Ուշադրություն. Նվազագույն եկամտահարկի հաշվարկման բազայի բացակայության դեպքում եկամտահարկի կանխավճարներ կարող է չկատարել՝

ա) ձեռնարկատիրական գործունեությունը նոր սկսող անհատ ձեռնարկատերը պետական գրանցման տարվա ընթացքում և մինչև

այդ տարվան հաջորդող տարվա հունիսի 15-ը՝ հարկային մարմնին գրավոր հայտնելույ հետո.

- բ) այն անհատ ձեռնարկատերը, որը նախորդ տարում ձեռնարկատիրական գործունեությունից հարկվող եկամուտ չի ունեցել՝ այդ (նախորդ) տարվա տարեկան եկամուտների հայտարարագիրը ներկայացնելույ հետո.
- գ) այն անհատ ձեռնարկատերը, որի նախորդ տարվա ընթացքում իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից հաշվարկված եկամտահարկի գումարը չի գերազանցել 50,0 հազ. դրամը՝ այդ (նախորդ) տարվա եկամտահարկի հայտարարագիրը ներկայացնելույ հետո.
- դ) այն անհատ ձեռնարկատերը, որը ընթացիկ տարում ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ չի նախատեսում (ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնելու)՝ այդ մասին նախօրոք հարկային մարմնին գրավոր հայտնելույ հետո:

Տվյալ եռամսյակի նվազագույն եկամտահարկի հաշվարկման բազա է հանդիսանում նախորդ եռամսյակի ընթացքում՝

- ապրանքների (բացառությամբ հիմնական միջոցների, արժեթղթերի և ֆոնդային ապրանքների) իրացումից,
- արտադրանքի (բացառությամբ գյաղատնտեսական արտադրությամբ զբաղված հարկատուի կողմից գյուղատնտեսական արտադրանքի) իրացումից,
- ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամուտները (իրացումից ստացվող հասույթը), ներառելով վարկերի (փոխառությունների) դիմաց ստացվող տոկոսները և վարձավճարները:

Նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի հաշվարկման բազան նվազեցվում է այդ եռամսյակի համար հաշվարկված՝ եկամտահարկով հարկվող գործունեության մեջ օգտագործվող՝ որպես անհատ ձեռնարկատեր ձեռք բերված, հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների չափով (բայց ոչ ավել, քան այդ եռամսյակների նվազագույն եկամտահարկի գումարի հաշվարկման բազայի 50%-ը):

Բացառապես հաստատագրված վճար կամ պարզեցված հարկ վճարող հանդիսացողներից բացի, մնացած բոլոր դեպքերում որպես

անհատ ձեռնարկատեր պետական գրանցում ունեցող ֆիզիկական անձի տարեկան եկամտահարկի վճարված գումարը պետք է պակաս չլինի եկամտահարկի նվազագույն գումարից:

Ուշադրություն. Անհատ ձեռնարկատիրոջ տարեկան եկամտահարկի հաշվարկված գումարը տվյալ հաշվետու տարվա նվազագույն եկամտահարկի գումարից պակաս լինելու դեպքում դրանց բացասական տարբերությունը ենթակա չէ վերադարձման (այդ թվում՝ գործունեության դադարեցման դեպքում)՝ այն հաշվանցվում է միայն գալիք ժամանակաշրջանի համար հաշվարկված եկամտահարկի գումարներից:

Հայտարարագիրը ներկայացվում է հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ից ոչ ուշ: Հայտարարագիր չներկայացնելը անհատ ձեռնարկատիրոջը չի ազատում հարկային պարտավորությունները կատարելուց:

Հայտարարագիրը ներկայացնելուց հետո սխալներ հայտնաբերելու դեպքում անհատ ձեռնարկատերը իրավունք ունի 2 ամսվա ընթացքում ճշգրտումներ մտցնել դրանում արտապղծված տվյալներում՝ ներկայացնելով նոր (ճշտված) հայտարարագիր:

Մինչև հարկային տարին ավարտվելը գործունեությունը (եկամտի աղբյուրի) դադարեցնելու և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու դեպքում Հայտարարագիրը ներկայացվում է ոչ ուշ, քան՝ մեկնելուց մեկ ամիս առաջ, իսկ Հայտարարագրով հաշվարկված եկամտահարկի գումարը վճարվում է վերջնահաշվարկը կատարելուց հետո՝ 5-օրյա ժամկետում:

Հայտարարագրով վճարման ենթակա եկամտահարկի գումարը (Հայտարարագրով հաշվարկված եկամտահարկի և եկամտահարկի եռամսյակային վճարումների հանրագումարի, ինչպես նաև հաշվանցման ենթակա եկամտահարկի այլ գումարների դրական տարբերությունը) վճարվում է պետական բյուջե մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը:

Ուշադրություն. Հայտարարագրով հաշվարկված եկամտահարկի գումարը՝ օտարերկրյա պետություններում ստացված եկամուտներ հայտարարագրված լինելու դեպքում, պակասեցվում է հարկի այն գումարի չափով, որը գանձվել է այլ պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան (բացառությամբ՝ համախառն եկամտից նվազեցվող համարվող եկամուտներից գանձված հարկի

գումարի): Ընդ որում՝ պակասեցվող (հաշվանցվող) հարկի գումարի չափը չի կարող գերազանցել այլ պետություններում ստացված եկամտից Հայաստանի Հանրապետությունում վճարվող եկամտահարկի գումարին:

Անհատ ձեռնարկատերերը ձեռնարկատիրական գործունեության մասով վարում են **եկամուտների և ծախսերի հաշվառման գիրք:**

Հաշվառման գրքի էջերը համարակալվում, կարվում և կազմվում են, որից հետո հաշվառման գիրքը ներկայացվում է անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վայրի հարկային մարմնին՝ կնքման: Կնքված և համարակալված հաշվառման գիրքը խիստ հաշվառման փաստաթուղթ է և հերթական համարով հաշվառվում է հարկային մարմնում: Հարկային մարմինը պարտավոր է կնքել և վերադարձնել հաշվառման գիրքը մեկ օրացույցային օրվա ընթացքում:

Հաշվառման գրքի կազմի վրա նշվում են անհատ ձեռնարկատիրոջ անուն և ազգանունը, ՀՎՀՀ, գտնվելու (բնակության) վայրի հասցեն և գրքի հերթական համարը: Գործունեության վայրի հասցեն անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրի հասցեից տարբերվելու դեպքում նշվում է նաև այդ վայրի հասցեն:

Լրացված (ավարտված) հաշվառման գրքերը պահվում են անհատ ձեռնարկատիրոջ մոտ մինչև՝ այդ գրքում ամենավերջին գրանցման օրվանից սկսած 3 տարին լրանալը: Հաշվառման գրքի լրանալուց (ավարտվելուց) հետո անհատ ձեռնարկատերը վերը նշված կարգով նոր հաշվառման գիրք է ներկայացնում հարկային մարմնին՝ կնքման և համարակալման համար:

Հաշվառման գրքում գրանցման (հաշվառման) ենթակա են անհատ ձեռնարկատիրոջ կողմից կատարված ցանկացած տնտեսական գործառնություն՝ ժամանակագրական կարգով: Հաշվառման գրքում կատարվող գրանցումների համար հիմք է հանդիսանում տնտեսական գործառնության կատարման փաստը, որը հիմնավորվում է սկզբնական հաշվառման փաստաթղթերով: Սկզբնական փաստաթղթերը հաշվառվում են մինչև գործառնության կատարման օրվա վերջը:

Հաշվառման գրքում հերթական համարով նշվում են տնտեսական գործառնության կատարման ամիսը և ամսաթիվը, բովանդակությունը, սկզբնական փաստաթղթի անվանումն և հերթական համարը, ինչպես նաև հաշվարկված եկամուտները և ծախսերը:

Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների

և մատուցված ծառայությունների (որոնց գծով առաջանում է իրացման շրջանառություն) դիմաց հաշվարկված եկամուտների գրանցումը ներառում է հաշվառման գրքի 2-4-րդ և 7-րդ սյունակների լրացումը: Հաշվարկված այլ եկամուտների գրանցումը ներառում է հաշվառման գրքի 2-4-րդ և 8-րդ սյունակների լրացումը:

Կատարված (հաշվարկված) ուղղակի ծախսերի գրանցումը ներառում է 2-4-րդ և 5-րդ սյունակների լրացումը: Կատարված (հաշվարկված) ընդհանուր տնտեսական ծախսերի գրանցումը ներառում է 2-4-րդ և 6-րդ սյունակների լրացումը:

Այն տնտեսական գործառնության համար, որի գծով չեն հաշվառվում եկամուտներ և (կամ) ծախսեր, լրացվում են միայն հաշվառման գրքի 2-4-րդ սյունակները (5-6-րդ և (կամ) 7-8-րդ սյունակները չեն լրացվում):

Հաշվառման գրքում սխալ թույլ տալու դեպքում տողի վրա գիծ է քաշվում այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախկին գրառումը, և հերթական ազատ տողում կատարվում է ճիշտ գրանցումը՝ նշելով սխալ գրանցված տողի համարը: Ջնջված տողի կողքին կատարվում է համապատասխան նշագրում սխալ գրառման մասին:

Անհատ ձեռնարկատերը հաշվառման տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով կարող է անցկացնել գույքի և պարտավորությունների գույքագրում, որի արդյունքները ներառվում են հաշվառման գրքում:

Ընդհանուր հարկման ռեժիմում գործող անհատ ձեռնարկատերը օրենսդրությամբ սահմանված դեպքերում վարում է նաև առաքվող (տեղափոխվող) ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր, արտադրանքի (ապրանքների) և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքեր՝ Կառավարության 31.07.1997թ. N 314 և N 315 որոշումներով սահմանված կարգով:

4.

Պարզեցված հարկի ռեժիմը

Անհատ ձեռնարկատիրոջ ձեռնարկատիրական գործունեությունը (բացառությամբ՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեություննից) կարող է հարկվել ԱԱՀ-ին և եկամտահարկին փոխարինող պարզեցված հարկով: Այսինքն, անհատ ձեռնարկատերը հարկման ռեժիմների ընտրության հնարավորություն ունի՝ կամ ընդհանուր հարկման և հաստատագրված վճարներով հարկման ռեժիմ, կամ պարզեցված հարկի և հաստատագրված վճարներով հարկման ռեժիմ:

Պարզեցված հարկի ընդհանուր գումարի մեջ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունը ընդունվում է 60%, իսկ եկամտահարկինը՝ 40%: Անհատ ձեռնարկատիրոջ պարզեցված հարկով հարկվող գործունեության մասով կասեցվում են ԱԱՀ-ի և եկամտահարկի արտոնությունները, հաշվի չեն առնվում համախառն եկամտից նվազեցումները:

4.1.

Պարզեցված հարկը

Տվյալ տարում պարզեցված հարկ վճարող համարվելու համար անհատ ձեռնարկատերը իր հաշվառման վայրի հարկային մարմին այդ տարվա հունվարի 1-ից 25-ը (ներառյալ) ներկայացնում է Հայտարարագիր՝ պարզեցված հարկ վճարող համարվելու համար օրենքով սահմանված պայմաններին բավարարելու և պարզեցված հարկով հարկման ռեժիմին անցնելու վերաբերյալ: Այդ դեպքում անհատ ձեռնարկատերը համարվում է պարզեցված հարկ վճարող ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով (բացառությամբ՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների): Նոր ստեղծված (պետական գրանցում ստացած) անհատ ձեռնարկատերերը՝ օրենքով սահմանված պայմաններին բավարարելու դեպքում, պետական գրանցում ստանալու օրվանից համարվում են պարզեցված հարկ վճարողներ, եթե նրանք պետական գրանցման օրվանից 1-ամսյա ժամկետում (բայց ոչ ուշ, քան պետական գրանցման եռամսյակի վերջին օրը) իրենց հաշվառման վայրի հարկային

մարմին են ներկայացնում պարզեցված հարկ վճարող համարվելու համար Հայտարարագիր :

Անհատ ձեռնարկատերերը պարզեցված հարկ վճարող չեն կարող համարվել՝

- ա) եթե նրանց կողմից նախորդ տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մատվ մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) գերազանցել է 50,0 մլն. դրամը.
- բ) եթե ունեն ենթակցիզային ապրանքների արտադրություն.
- գ) եթե ունեն նախորդ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված և չիրացված 1,0 մլն. դրամը գերազանցող այնպիսի ապրանքների մնացորդ, որոնց համար ԱԱՀ-ը վճարված չի եղել ներմուծման պահին.
- դ) եթե տվյալ տարվա հունվարի 1-ին ունեն 100,0 հազար և ավելի դրամը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ (այդ թվում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարը).
- ե) եթե արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնողներ են, հանքագործական արդյունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման, կապիտալ շինարարության իրականացման, կապիտալ շինարարության բնագավառում քաղաքաշինության փաստաթղթերի մշակման կամ ինժեներական հետազննման և փորձաքննության, իրավունքի, հաշվապահական հաշվառման և աուդիտի բնագավառի գործունեություն իրականացնողներ են, առևտրային գործունեության և կառավարման հարցերով խորհրդատվություն իրականացնողներ են.
- զ) եթե ունեն գյուղատնտեսական արտադրանքի արտադրություն.
- է) եթե համատեղ գործունեության պայմանագրի կողմ են հանդիսանում.
- ը) եթե նրան է պատկանում պարզեցված հարկ վճարողի կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայտաբաժին::

Անհատ ձեռնարկատերը կարող է իր ցանկությամբ կամավոր ձևով վերադառնալ ընդհանուր հարկման դաշտ՝ ներկայացնելով Դիմում ընդհանուր հարկման ռեժիմին անցնելու մասին: Այդ դեպքում նա համարվում է ընդհանուր հարկման ռեժիմին անցած դիմումը ներկայացնելու եռամսյակին հաջորդող ամսվա 1-ից:

Պարզեցված հարկով հարկման ռեժիմի **դուրս գալը** կատարվում է նաև պարտադրաբար՝ պարզեցված հարկ վճարող դադարելու օրենքով սահմանված հիմքերի առաջացման դեպքերում՝

- ա) պարզեցված հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանում բույլ է տվել ակտիվային հարկով հարկման ենթակա ապրանքների դրշմավորման կարգին վերաբերող՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 170⁷, 170⁸, 170⁹ կամ 170¹² հոդվածների մեկից ավելի խախտման դեպքեր.
- բ) տվյալ եռամսյակի առաջին ամսվա 1-ի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունները գերազանցել են 100,0 հազ. դրամը.
- գ) իրականացնում է ենթակայիվային ապրանքների արտադրություն, արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործունեություն, հանքագործական արդյունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման, կապիտալ շինարարության իրականացման, կապիտալ շինարարության բնագավառում քաղաքաշինության փաստաթղթերի մշակման կամ ինժեներական հետազննման և փորձաքննության, իրավունքի, հաշվապահական հաշվառման և աուդիտի բնագավառի գործունեություն, առևտրային գործունեության և կառավարման հարցերով խորհրդատվություն.
- դ) եռամսյակի ընթացքում իր կողմից Հայաստանի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծել է 250,0 հազ. դրամը գերազանցող արժեք ունեցող այնպիսի ապրանքներ, որոնց համար ԱԱՀ-ը վճարված չի եղել ներմուծման պահին.
- ե) հանդիսացել է համատեղ գործունեության պայմանագրի կողմ.
- զ) տվյալ տարվա սկզբից ունեցել է 50,0 մլն. դրամից ավելի իրացման շրջանառություն.

ե) տվյալ տարվա որևէ պահին խանութի, կրպակի (տաղավարի) միջոցով առևտրական գործունեության մասով ունեցել է 15,0 մլն. դրամը գերազանցող՝ իրեն պատկանող ապրանքային մնացորդ (հաշվարկված ձեռքբերման և վաճառքի գների առավելագույնով):

Հարկվող օբյեկտ է համարվում մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը):

Վարձակալության դեպքում վարձատուի իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը) վարձավճարն է, իսկ փոխառության դեպքում՝ տոկոսները: Իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը) ներառում է նաև ռոյալթիները:

Անհատույց (մասնակի հատույցմամբ), ինչպես նաև փոխանակման գործարքների (գործառնությունների) համար իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը) որոշվում է այդ գործարքների (գործառնությունների) համար սովորաբար կիրառվող (իրական) գներից էլնելով:

Ուշադրություն. Հարկվող օբյեկտը թաքցնելու (պակաս ցույց տալու) դեպքում գանձվում է թաքցված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի համար նախատեսված (հաշվարկված) պարզեցված հարկի գումարը և տուգանք՝ այդ գումարի չափով:

Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով կատարվող հաշվարկները՝

ա) խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության մասով պարզեցված հարկը կազմում է՝

$$\text{Պարզեցված հարկ} = \text{Իրացման շրջանառություն} \times 3.5\%,$$

բ) վարձակալության մասով պարզեցված հարկը կազմում է՝

$$\text{Պարզեցված հարկ} = \text{Իրացման շրջանառություն} \times 10\%,$$

գ) այլ գործունեության մասով պարզեցված հարկը կազմում է՝

$$\text{Պարզեցված հարկ} = \text{Իրացման շրջանառություն} \times 5\%:$$

Պարզեցված հարկ վճարողի պարզեցված հարկով հարկվող գործունեության հետ կապված ծախսերը հաշվի չեն առնվում պարզեցված հարկը հաշվարկելիս, ուստի հաճախ անհատ ձեռնարկատերերը

պատշաճ ուշադրություն չեն դարձնում ծախսերի հիմնավոր լինելն ապահովելու ուղղությամբ՝ հիմնականում ցույց են տալիս շուկայից ձեռքբերված, առավել ևս, որ միակողմանի գնման ակտերով վճարված եկամուտների նկատմամբ 3% դրույքաչափով եկամտահարկի հաշվարկման և գանձման դրույթը չի տարածվում պարզեցված հարկ վճարողների վրա:

Սակայն տվյալ դեպքում անտեսվում է այն հանգամանքը, որ պարզեցված հարկ վճարող անհատ ձեռնարկատերը հաշվետու տարին ավարտվելուց հետո ներկայացնում է պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով **Հայտարարագիր**, որտեղ հայտարարագրում է ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները և դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերը, որոնց տարբերության գումարից հաշվարկվում է պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների տարեկան մեծությունը: Այսպիսով՝ եթե պարզեցված հարկ վճարող (նույնը վերաբերվում է նաև հաստատագրված վճարներով հարկվող գործունեությանը) անհատ ձեռնարկատիրոջ ծախսերը հիմնավորված չեն փաստաթղթերով, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները հաշվարկվում են պարզեցված հարկով (հաստատագրված վճարներով) հարկվող ամբողջ շրջանառության նկատմամբ:

Քանի որ պարզեցված հարկը փոխարինում է ԱԱՀ-ին և եկամտահարկին, ապա այդ հարկատեսակների համար սահմանված են առանձնահատկություններ՝ հարկման ռեժիմների փոփոխման դեպքերում:

ա) ԱԱՀ-ի հաշվառումը՝ պարզեցված հարկով հարկման ռեժիմին անցնելիս.

Պարզեցված հարկով հարկման ռեժիմին անցնելու դեպքում մինչ այդ իրացման շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գերազանցող՝ մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված (մաքսային մարմին վճարված) ԱԱՀ-ի գումարների մնացորդը միացվում է ծախսերին (պարզեցված հարկ վճարող համարվելու առաջին եռամսյակում):

բ) ԱԱՀ-ի հաշվառումը՝ ընդհանուր կարգով հարկման ռեժիմին անցնելիս.

Հարկման ընդհանուր ռեժիմին անցնելու դեպքում իրացման շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից չեն հաշվանցվում պարզեցված հարկով հարկման ռեժիմում մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված (մաքսային մարմին վճարված) ԱԱՀ-ի գումարները:

գ) Եեկամտահարկի հաշվառումը՝ պարզեցված հարկով հարկման ռեժիմին անցնելիս (և հակառակը).

Պարզեցված հարկին անցնելիս՝

- մինչ այդ ստացած հարկային վնասը «սառեցվում է» և կարող է նվազեցվել համախառն եկամտից հետագայում նորից հարկման ընդհանուր ռեժիմին անցնելուց,
- կատարված ուղղակի ծախսերը, որոնց դիմաց դեռևս չեն ստացվել եկամուտներ (այսինքն՝ դեռևս որպես ծախսումներ որակվողները), կարող են նվազեցվել համախառն եկամտից հարկման ընդհանուր ռեժիմին անցնելուց:

Պարզեցված հարկով հարկման ժամանակ կատարված ծախսերը հարկման ընդհանուր ռեժիմին անցնելուց հարկ վճարողի համախառն եկամտից ենթակա չեն նվազեցման:

Պարզեցված հարկի հաշվետու ժամանակաշրջանը եռամսյակն է:

Պարզեցված հարկ վճարողները մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը (ներառյալ) հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում պարզեցված հարկի Հաշվարկը: Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար պարզեցված հարկի ներկայացված Հաշվարկներում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում հարկ վճարողը կարող է հարկային մարմին ներկայացնել ճշգրտված Հաշվարկներ, որոնց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների հարկային պարտավորությունների վերահաշվարկ: Ճշգրտված Հաշվարկներ չեն ներկայացվում այն հաշվետու ժամանակաշրջանների համար, որում կատարվել է պարզեցված հարկի գծով ստուգում՝ այդ ժամանակաշրջանի համար պարզեցված հարկի գծով պարտավորությունները կարող են ճշգրտվել միայն ներկայացված Դիմումի հիման վրա իրականացվող կրկնակի ստուգման արդյունքներով:

Պարզեցված հարկի գումարը վճարվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը (ներառյալ):

Պարզեցված հարկ վճարողները՝ **վարում են եկամուտների և ծախսերի հաշվառում** (գործունեության յուրաքանչյուր տեսակի համար՝ եկամուտների և ծախսերի հաշվառման առանձին գիրք), իսկ առաքվող (տեղափոխվող) ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր, արտադրանքի (ապրանքների) և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքեր չեն վարում:

5. Հաստատագրված վճարները

Հաստատագրված վճարը սահմանված է «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և անհատ ձեռնարկատերերի համար փոխարինում է ԱԱՀ-ին և եկամտահարկին: Հաստատագրված վճարի ընդհանուր գումարի մեջ ԱԱՀ-ը կազմում է 60%: Հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների մասով կատարվում են ԱԱՀ-ի և եկամտահարկի արտոնությունները, հաշվի չեն առնվում եկամտահարկի գծով նվազեցումները:

Անհատ ձեռնարկատիրոջ համար հաստատագրված վճարի հարկվող օբյեկտ են գործունեության հետևյալ տեսակները՝

- առևտրի իրականացման վայրից դուրս գտնվող՝ Երևան քաղաքում՝ 7մ², այլ վայրերում՝ 10մ² առևտրական տարածքը չզերագանցող կրպակների միջոցով իրականացվող առևտրական գործունեությունը և բնակելի տարածքից անմիջական վաճառքը,
- առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեությունը,

***Ուշադրություն.** Կազմակերպիչները յուրաքանչյուր ամսվա արդյունքներով մինչև հաջորդ ամսվա 15-ը ներառյալ ՀՀ կառավարության 01.04.2002թ. N 298 որոշմամբ սահմանված կարգով ներկայացնում են Տեղեկություններ՝ առևտրի իրականացման վայրում առևտուր իրականացնողների մասին (տեղեկություններ չներկայացնելու դեպքում գանձվում է տուգանք՝ 500,0 հազ. դրամի չափով):*

- հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը,
- ավտոտրանսպորտային գործունեությունը,
- վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությունը,
- ավտոտեխնիկապատրաստման կայանների (կետերի) գործունեությունը,
- բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի գործունեությունը,
- ավտոկանգառների գործունեությունը,
- արդյունագործական ձկնորսության գործունեությունը,
- համակարգչային խաղերի կազմակերպումը,
- տեսամագնիտոֆոնների (տեսաժապավենների) վարձույթը,
- բաղնիքների (ցնցուղարանների) կազմակերպումը,
- ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեությունը,

Ուշադրություն. Նշված գործունեությունն իրականացնողները յուրաքանչյուր ամսվա արդյունքներով մինչև հաջորդ ամսվա 15-ը (ներառյալ) ՀՀ կառավարության 14.04.2004թ. N 484-Ն որոշմամբ սահմանված կարգով ներկայացնում են Տեղեկություններ՝ ամսվա ընթացքում գազալցման տվյալ կայանի (կետի) միջոցով իրացված գազի ֆիզիկական ծավալների մասին՝ արտահայտված խորանարդ մետրերով (տեղեկություններ չներկայացնելու կամ իրացման ծավալները թերհայտարարագրելու դեպքում գանձվում է տուգանք՝ 500,0 հազ. դրամի չափով):

- բիլիարդ խաղի կազմակերպումը:

Ուշադրություն. Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն հաստատագրված վճարի ռեժիմից դուրս են գալիս որոշակի գործունեության տեսակները, որտեղ հարկ վճարողների համար պարտադրվում է ՀՂՄ-ների կիրառումը: Մասնավորապես՝ ներկայումս լուսանկարչական լաբորատորիաների գործունեությունն իրականացնողները ՀՂՄ-ների պարտադիր կիրառման հետ կապված չեն համարվում հաստատագրված վճար վճարողներ:

Անհատ ձեռնարկատերը մինչև հաստատագրված վճարով հարկվող գործունեություն սկսելը իր գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային մարմին է ներկայացնում Հայտարարություն 2 օրինակից՝ Ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ: Հարկային մարմնի կողմից հաշվառվելու և կնքվելուց հետո Հայտարարության մեկ օրինակը վերադարձվում է հարկ վճարողին, որը փակցվում է հաստատագրված վճարով հարկվող գործունեության իրականացման վայրում՝ առավել տեսանելի տեղում:

Հաստատագրված վճարներով հարկման բազան՝ Ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների որոշակի արտադրյալն է (դրամական արտահայտությամբ)՝

$$\text{Հարկման բազա} = \text{Բազմապատիկ մեծություն} \times \\ \times \text{ Ելակետային տվյալ(ներ)} \times \text{ Ուղղիչ գործակից(ներ)}:$$

Ելակետային տվյալների կամ ուղղիչ գործակիցների փոփոխությունների (բացառությամբ՝ գործունեություն ժամանակավոր դադարեցման) դեպքում հարկ վճարողն այդ մասին գրավոր տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային մարմնին՝ ներկայացնելով նոր Հայտարարություն (2 օրինակից), իսկ նախկին Հայտարարությունը վերադարձվում է հարկային մարմնին կամ ոչնչացվում հարկ վճարողի կողմից:

Օրենքով գործունեության առանձին տեսակների համար նախատեսվում են՝

- սահմանային չափեր (սահմանային չափերի համապատասխան ցուցանիշներների վերաբերյալ ներկայացվում են տեղեկություններ (հայտարարություն) ՀՀ ԿԱ ՀՊԾ-ի կողմից սահմանված ձևով):
- համամասնություններ (համամասնությունների վերաբերյալ ներկայացվում է տեղեկանք ՀՀ ԿԱ ՀՊԾ-ի կողմից սահմանված ձևով):

Գործունեության *ժամանակավոր* դադարեցման դեպքում հարկ վճարողն այդ մասին նախապես տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային մարմնին՝ ներկայացնելով *Գիմում-Հայտարարություն* (նշելով դադարեցման ժամանակահատվածը):

Գիմում-Հայտարարության մեջ գործունեության դադարեցման ժամանակահատվածը նշված չլինելու (միայն գործունեության դա-

դարեցման սկիզբը նշված լինելու) դեպքում գործունեությունը վերսկսելիս հարկ վճարողը նախապես տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային մարմնին՝ ներկայացնելով Նոր Հայտարարություն (Նախկին Հայտարարությունը վերադարձվում է կամ ոչնչացվում հարկ վճարողի կողմից):

Գործունեության **դադարեցման (կասեցման)** դեպքում անհատ ձեռնարկատերը գրավոր Դիմում-Հայտարարություն ներկայացնելու միջոցով նախապես տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային մարմնին, իսկ նրա մոտ առկա Հայտարարությունը վերադարձվում է հարկային մարմնին կամ ոչնչացվում անհատ ձեռնարկատիրոջ կողմից:

Ուշադրություն. Հարկային մարմնին գործունեության դադարեցման (կասեցման) մասին Դիմում-Հայտարարություն ներկայացնելու դեպքում գործունեության այն տեսակների մասով, որոնց համար ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացույցային օրերը և դրանց թիվը չեն հանդիսանում էլակետային տվյալ (հանրային սննդի, ավտոտրանսպորտային գործունեություն, ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեություն, բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի գործունեություն, համակարգչային խաղերի կազմակերպում, տեսամազվիտոֆոնների (տեսաժապավենների) վարձույթ, բաղնիքների (ցնցուղարանների) կազմակերպում, ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն և բիլիարդ խաղի կազմակերպում) հաստատագրված վճարի հաշվարկը կասեցվում է անհատ ձեռնարկատիրոջ կողմից Դիմում-Հայտարարության մեջ նշված օրվանից, որը չի կարող Դիմում-Հայտարարության ներկայացման հաջորդ օրվանից ավելի շուտ լինել:

Հաստատագրված վճարի վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը (ներառյալ):

Հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների մասով եկամտահարկի կանխավճարային մուծումներ չեն կատարվում:

Հաստատագրված վճար վճարող անհատ ձեռնարկատերը օրենսդրությամբ սահմանված դեպքերում վարում է Կառավարության 31.07.1997թ. N 314 որոշմամբ սահմանված առաքվող (տեղափոխվող) ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր և 31.07.1997թ. N 315 որոշմամբ սահմանված արտադրանքի (ապրանքների) և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքեր:

6.

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները

«Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, անհատ ձեռնարկատերը ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները հաշվարկում և վճարում է ինքնուրույնաբար՝ «Անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի տարեկան եկամուտների մասին» Հայտարարագրի հիման վրա:

Ընդ որում՝ Հայտարարագրով հաշվարկված սոցիալական վճարը (անմիջականորեն անհատ ձեռնարկատիրոջ սոցիալական վճար) անհրաժեշտ է տարանջատել անհատ ձեռնարկատիրոջ որպես գործատու հաշվարկվող, պահվող (գանձվող) և պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե փոխանցվող սոցիալական վճարից: Վարձու աշխատողներ ունենալու, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրերով կատարվող աշխատանքի դիմաց ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելու դեպքում անհատ ձեռնարկատերերը պարտավոր են սոցիալական վճարներ կատարել նաև այդ անձանց համար:

Անհատ ձեռնարկատիրոջ համար **սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտ** է հանդիսանում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված տարեկան համախառն եկամուտները, որոնցից նախապես նվազեցվում են «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված եկամտի առանձին տեսակների ստացման հետ կապված ծախսերի և նվազեցվող եկամուտների գումարը՝ առանց հաշվի առնելու անձնական նվազեցումները: Նշվածը վերաբերվում է անհատ ձեռնարկատիրոջ տվյալ հաշվետու տարվա ձեռնարկատիրական ամբողջ գործունեությանը՝ հարկման ռեժիմներից անկախ: Այսինքն՝ եթե տվյալ հաշվետու տարում անհատ ձեռնարկատերն իրականացնում է և հաստատագրված վճարներով, և պարզեցված հարկով (կամ ընդհանուր հարկման կարգով հարկվող) գործունեություն, սոցիալական վճարների հաշվարկ-

ման օբյեկտի տարեկան չափը՝ ներկայացվող Հայտարարագրի հիման վրա, նա որոշում է որպես այդ ամբողջ գործունեության արդյունքում ստացված համախառն եկամտի և դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի տարբերություն:

Անհատ ձեռնարկատերերը սոցիալական վճարումներ կատարում են հետևյալ դրույքաչափերով՝

Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի տարեկան չափը	Սոցիալական վճարի չափը
մինչև 1,2 մլն. դրամ	15%, բայց ոչ պակաս 60,0 հազ. դրամից
1,2 մլն. դրամից ավելի	180,0 հազ. դրամ գումարած 1,2 մլն. դրամը գերազանցող գումարի 5%-ը

Հաշվետու տարվա յուրաքանչյուր ամսվա համար անհատ ձեռնարկատերը վճարում է **նվազագույն սոցիալական վճար** (անկախ գործունեություն իրականացնելու հանգամանքից) 5,0 հազ. դրամ գումարով՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը: Նշված չափերով վճարված նվազագույն սոցիալական վճարների հանրագումարը (60,0 հազ. դրամը) հաշվանցվում է վերը նշված դրույքաչափերով հաշվարկված սոցիալական վճարի տարեկան գումարից, եթե այն գերազանցում է 60,0 հազ. դրամը:

***Օրինակ՝** եթե 2006 թվականի տարեկան արդյունքներով անհատ ձեռնարկատիրոջ սոցիալական վճարի հաշվարկման տարեկան օբյեկտը կազմել է 500,0 հազ. դրամ, որից տարեկան սոցիալական վճարի գումարը կազմում է 75,0 հազ. դրամ, ապա անհատ ձեռնարկատերը (ամսական նվազագույն սոցիալական վճարները կատարած լինելու դեպքում) տվյալ հաշվետու տարվա համար ապահովագրության բյուջե փոխանցում է 15,0 հազ. դրամ:*

Եթե 2006 թվականի տարեկան արդյունքներով անհատ ձեռնարկատիրոջ սոցիալական վճարի հաշվարկման տարեկան օբյեկտը կազմել է 300,0 հազ. դրամ, որից տարեկան սոցիալական վճարի գումարը կազմում է 45,0 հազ. դրամ, ապա անհատ ձեռնարկատերը (ամսական նվազագույն սոցիալական վճարները կատարած լինելու դեպքում) տվյալ հաշվետու տարվա համար պարտադիր սոցիալա-

կան ապահովագրության բյուջե լրավճարելու գումար չի ունենում, սակայն ամսական նվազագույն գումարների հանրագումարի և տարեկան սոցիալական վճարի տարբերության գումարը՝ 15,0 հազ. դրամը, նա կորցնում է (այն չի վերադարձվում և հետագայում էլ հաշվանցման ենթակա չէ):

Պետական գրանցման վկայականը հարկային մարմնին ժամանակավորապես հանձնած և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար (օրինակ՝ պետական գրանցման վկայականը հարկային մարմին 2006 թվականի մարտի 20-ին ժամանակավորապես հանձնած, 2007 թվականի նոյեմբերի 10-ին հետ ստացած և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը ամսական նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում 2006 թվականի ապրիլ-դեկտեմբեր և 2007 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների համար): Անհատ ձեռնարկատիրոջ վկայականի ժամանակավորապես հանձնումը իր հաշվառման վայրի հարկային մարմին կատարվում է գրավոր դիմումի հետ միասին նույն (դիմումի ներկայացման և վկայականը հանձնելու) օրը՝ հարկային մարմնի կողմից անհատ ձեռնարկատիրոջը վկայականի հանձնման վերաբերյալ տեղեկանքի (ստացականի) տրամադրմամբ: Ժամանակավորապես հանձնված վկայականի վերադարձը հարկային մարմնի կողմից կատարվում է անհատ ձեռնարկատիրոջ գրավոր դիմումի համաձայն նույն (դիմումի ներկայացման) օրը՝ վկայականը ստանալու վերաբերյալ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությամբ:

Հաշվետու տարվա արդյունքներով, սահմանված ձևով Հայտարարագիր անհատ ձեռնարկատերը իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացնում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:

Հաշվետու տարվա համար հաշվարկված սոցիալական վճարների և ամսական նվազագույն սոցիալական վճարների հանրագումարի դրական տարբերությունն անհատ ձեռնարկատերը ապահովագրության բյուջե է փոխանցում (վճարում) մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը (ներառյալ):

Հաշվետու տարում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերն այդ տարվա նվազագույն սոցիալական վճարի գումարները վճարում են պետական գրանցում ստանալու ամսվանից մինչև տվյալ տարվա վերջին օրը ընկած ժամանակահատվածի ամիսների համար: Լուծարվող անհատ ձեռնարկատերերը հայտարարագիրը ներկայացնում են և սոցիալական վճարները կատարում են մինչև լուծարման գործընթացի ավարտն ընկած ժամանակաշրջանի համար:

Անհատ ձեռնարկատերը հայտարարագիրը սահմանված ժամկետում ներկայացնելուց հետո իրավունք ունի ճշգրտումներ մտցնել դրանում արտացոլված տվյալներում՝ ներկայացնել նոր (ճշտված) հայտարարագիր, որի հիման վրա կատարվում է այդ տարվա համար սոցիալական վճարների պարտավորությունների վերահաշվարկ: Հարկային մարմինների կողմից անհատ ձեռնարկատերերի մոտ իրականացված ստուգումների ընթացքում, ինչպես նաև արդեն ստուգված տարիներին վերաբերող հայտարարագրերի ճշտում չի իրականացվում (սոցիալական վճարների ճշտված հայտարարագրեր չեն ներկայացվում): Ստուգված տարիների համար սոցիալական վճարների գծով պարտավորությունները կարող են ճշտվել միայն անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացված դիմումի հիման վրա իրականացվող կրկնակի ստուգման արդյունքներով:

7. **Գույքահարկը**

Գույքահարկը սեփականության իրավունքով անձին պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում՝

- շենքերը և շինությունները (մասնավորապես՝ անհատական բնակելի տունը, բնակարանը, այգետնակը (ամառանոցը), ավ-

տոտոնակը, արտադրական և հասարակական նշանակության շինություններն),

- փոխադրամիջոցները (մասնավորապես՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, ջրային փոխադրամիջոցը, մոտոցիկլետը):

Անկախ սեփականության իրավունքի առկայությունից՝ գույքահարկ հաշվարկվում և վճարվում է նաև նոր կառուցված, ձեռք բերված և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված այն շինությունների համար, որոնք դեռևս չեն ստացել իրավունքների պետական գրանցում, ինչպես նաև սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցների) համար:

Շինությունների հարկման բազան օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքն է (արտահայտված դրամներով):

Անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների գնահատումը (վերագնահատումը) կատարվում է 3 տարին մեկ անգամ և կադաստրային արժեքները հիմք են ընդունվում հետագա 3 տարիների գույքահարկը հաշվարկելու համար:

***Ուշադրություն.** (Վերա)գնահատման տարիների միջև ընկած ժամանակահատվածում շինության ավարտվածության աստիճանի, հարկայնության, նպատակային նշանակության փոփոխությունների, ինչպես նաև սեփականության իրավունքով շինություն ձեռք բերելու դեպքերում գնահատված կադաստրային արժեքները հիմք են ընդունվում մինչև շինությունների հաջորդ գնահատումը:*

Փոխադրամիջոցների հարկման բազան դրանց քաշող շարժիչի հզորությունն է (արտահայտված ձիաուժերով կամ կիլովատերով): Եթե փոխադրամիջոցի վրա առկա են մեկից ավելի քաշող շարժիչներ, ապա հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Հասարակական և արտադրական նշանակության շինությունների և ավտոտնակների գույքահարկի տարեկան գումարը (2005 թվականի հունվարի 1-ից) հաշվարկվում է **հարկման բազան** (հասարակական և արտադրական նշանակության շինությունների, ավտո-

տնակների կադաստրային արժեքը) բազմապատկելով **տարեկան դրույքաչափով** (հասարակական և արտադրական նշանակության շինությունների համար՝ 0.3%, ավտոտնակների համար՝ 0.2%) :

Հարկվող օբյեկտ համարվող մնացած շինությունների գույքահարկը (2005 թվականի հունվարի 1-ից) հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Շարկման բազան (կադաստրային արժեք)	Տարեկան դրույքաչափ
մինչև 3,0 մլն. դրամը ներառյալ	հարկման բազայի 0%
3,0 մլն. դրամից մինչև 10,0 մլն. դրամը (ներառյալ)	100 դրամ՝ գումարած հարկման բազայի 3,0 մլն. դրամը գերազանցող գումարի 0.1%
10,0 մլն. դրամից մինչև 20,0 մլն. դրամը (ներառյալ)	7100 դրամ՝ գումարած հարկման բազայի 10,0 մլն. դրամը գերազանցող մասի 0.2%
20,0 մլն. դրամից մինչև 30,0 մլն. դրամը (ներառյալ)	27100 դրամ՝ գումարած հարկման բազայի 20,0 մլն. դրամը գերազանցող մասի 0.4%
30,0 մլն. դրամից մինչև 40,0 մլն. դրամը (ներառյալ)	67100 դրամ՝ գումարած հարկման բազայի 30,0 մլն. դրամը գերազանցող մասի 0.6%
40,0 մլն. դրամից ավելի	127,100 դրամ՝ գումարած հարկման բազայի 40,0 մլն. դրամը գերազանցող մասի 1.0%

Փոխադրամիջոցների գույքահարկը հաշվարկվում է՝

1) Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար՝ հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

ա) մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

- 1-ից 120 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ,
- 121-ից 250 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 300 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ՝ 1000 դրամ,
- 251 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 500 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ՝ 1000 դրամ.

բ) 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների և բեռնատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան`

- 1-ից 200 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց` 100 դրամ,
- 201 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց` 200 դրամ:

Մինչև 3 տարվա վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է 100%-ով: 3 տարուց ավելի վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է հարկի գումարի 10%-ի չափով (բայց ոչ ավելի, քան հարկի գումարի 50%-ը): Ընդ որում` վաղեմության ժամկետը որոշելու համար հիմք է ընդունվում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի թողարկման տարեթիվը:

Բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների վաղեմության ժամկետի 20-րդ տարին լրանալուց հետո տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի համար գույքահարկ չի հաշվարկվում և չի վճարվում:

2) Մոտոցիկլետների համար գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 40 դրամ դրույքաչափով:

3) Ջրային փոխադրամիջոցների համար գույքահարկի տարեկան դրույքաչափը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 150 դրամ դրույքաչափով:

Փոխադրամիջոցների հարկման բազան կիրառված արտահայտված լինելու դեպքում գույքահարկի տարեկան գումարը որոշվում է` համապատասխան դրույքաչափի նկատմամբ կիրառելով 1.36 գործակից:

Գույքահարկի սպարտավորությունն առաջանում է հարկվող օբյեկտի (կամ դրա մի մասի) նկատմամբ սեփականության իրավունքի ծագման (սեփականության իրավունքի պետական գրանցման) ամսվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Ուշադրություն. Բացառություն են կազմում մասնավորապես՝ նոր կառույցված, ձեռք բերված և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված, սակայն դեռևս իրավունքների պետական գրանցում չստացած շինությունները, ինչպես նաև սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառույցված շենքերը և շինությունները (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցները):

Սեփականության իրավունքով պետական գրանցում չստացած նշված հարկվող օբյեկտների համար գույքահարկի գծով հարկային պարտավորությունն առաջանում է անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից դրանց հաշվառման և գնահատման վերաբերյալ տեղեկությունները գույքահարկ վճարողներին հաշվառող մարմին տրամադրելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Սեփականության իրավունքով չգրանցվելու դեպքում նշված հարկվող օբյեկտների համար գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնում այդ հարկվող օբյեկտները հաշվառումից հանելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից :

Ֆիզիկական անձանց, այդ թվում անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացույցային տարին:

Գույքահարկ վճարող ֆիզիկական անձինք գույքահարկը հաշվարկում են ինքնուրույն և տարեկան հաշվարկները կարող են մինչև հաշվետու տարվա հոկտեմբերի 1-ը ներառյալ ներկայացնել՝

- 1) հարկվող օբյեկտ համարվող շինության համար՝ շինության գտնվելու վայրի հաշվառող մարմին.
- 2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար՝ հարկ վճարողի հաշվառման վայրի հաշվառող մարմին: Հաշվառման վայրի բացակայության դեպքում հաշվարկները ներկայացվում են հարկ վճարողի հիմնական բնակության վայրի հաշվառող մարմին: Եթե հաշվառման կամ հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա հաշվարկները ներկայացվում են փոխադրամիջոցի գրանցման վայրի հաշվառող մարմին:

Հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների հաշվառման և գնահատման, ինչպես նաև փոխադրամիջոցների գծով հաշվառում (գրանցում) վարող համապատասխան լիազոր մարմինների կողմից փոխադրամիջոցների վերաբերյալ ներկայացված տեղեկությունները՝ հաշվառող մարմինները հաշվարկում են ֆիզիկական անձանց շինությունների հետագա երեք տարիների և փոխադրամիջոցների ընթացիկ տարվա գույքահարկի գումարները:

2003 թվականի հունվարի 1-ից սկսած՝ հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների հաշվառման և գնահատման, ինչպես նաև փոխադրամիջոցների գծով հաշվառում (գրանցում) վարող համապատասխան լիազոր մարմինների կողմից փոխադրամիջոցների վերաբերյալ ներկայացրած տեղեկությունները՝ ֆիզիկական անձանց շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկը հաշվարկում են տեղական ինքնակառավարման մարմինները՝ գույքահարկի հաշվարկման հայտը հարկային մարմնի հետ համաձայնեցնելով:

Տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինները մինչև գնահատման (վերագնահատման) տարվա դեկտեմբերի 1-ը գույքահարկ վճարող ֆիզիկական անձանց ներկայացնում են հաստատված ձևով գույքահարկի վճարման ծանուցագրեր:

Ներկայացված ծանուցագրերում գույքահարկի հաշվարկի հետ չհամաձայնելու դեպքում ֆիզիկական անձինք գույքահարկի հաշվարկի ճշտման նպատակով կարող են դիմել հաշվառող և գույքահարկի հաշվարկման համար տեղեկություններ տրամադրող լիազոր մարմիններ:

Տվյալ տարվա դեկտեմբերի 1-ից ուշ ծանուցագիր ստանալը կամ ծանուցագիր չներկայացնելը գույքահարկ վճարողին չի ազատում հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարելու պարտականությունից:

8.

Հողի հարկը

Հողի սեփականատեր, պետական սեփականություն հանդիսացող հողերի մշտական կամ ժամանակավոր օգտագործող հանդիսացող անհատ ձեռնարկատերը հողի հարկ է վճարում «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: Վարձակալության պայմաններով օգտագործման (հողի սեփականատերերի, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողների կողմից իրենց հողերը վարձակալության պայմաններով) տրամադրված հողամասերի համար հողի հարկը գանձվում է վարձատուից:

Հողամասի նկատմամբ սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքները հաստատող փաստաթղթեր են համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսգրքերով ու «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նաստեսված փաստաթղթերը:

Հողի հարկի տարեկան դրույքաչափը սահմանված է.

ա) գյուղատնտեսական նշանակության հողերի համար դրանց կադաստրային գնահատմամբ որոշված (ԿԳ-Ո) հաշվարկային զուտ եկամտի (ՀՁԵ) 15%-ի չափով:

բ) ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, կապի, տրանսպորտի զբաղեցված հողատարածքների համար՝ համապատասխան կադաստրային շրջանացման գոտիների տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի (ԿԳ-Ա) նկատմամբ բնակավայրերի ներսում 1%-ի, իսկ բնակավայրերից դուրս 0.5%-ի չափով,
- ոչ գյուղատնտեսական նշանակության մյուս հողերի համար՝ տվյալ հողատեսքի ԿԳ-Ա 1%-ի չափով:

Հարկման ենթակա մակերեսների մեջ մտնում են նաև շենքերով ու շինություններով զբաղեցված հողերը, դրանց պահպանության համար անհրաժեշտ տարածքները, ինչպես նաև օբյեկտների սանիտարապահական, տեխնիկական և մյուս գոտիները:

Հողի հարկը հաշվարկվում է հողամասի սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքի ձեռքբերման (սեփականության իրավունքի կամ մշտական օգտագործման պայմանագրի պետական գրանցման) ամսվան հաջորդող ամսից և դադարում է հողամասի սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսից: Հաշվետու տարվա ընթացքում հողի հարկի գծով արտոնության իրավունք ձեռք բերած հարկ վճարողը հարկի վճարումից արտոնության չափով ազատվում է այն ամսից, երբ ծագել է արտոնության իրավունքը, իսկ հաշվետու տարվա ընթացքում հողի հարկի գծով արտոնության իրավունքը դադարելու դեպքում հողի հարկն ամբողջությամբ հաշվարկվում է այդ իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսից:

Քաղաքացիներն ու գյուղացիական տնտեսությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն, հիմք ընդունելով հարկային մարմինների կողմից հաշվարկված և մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը իրենց հանձնված վճարման ծանուցագրերը:

Վճարողների հաշվառումն ու հողի հարկի հաշվարկումը կատարվում է յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ: Հարկային մարմիններն իրականացնում են վճարողների հաշվառում, վերահսկողություն են սահմանում հարկի ճիշտ հաշվարկման և ժամանակին վճարման նկատմամբ:

Հաշվարկված հարկի գումարները քաղաքացիներն ու գյուղացիական տնտեսությունները պետական բյուջե են վճարում հավասար մասերով, ոչ ուշ, քան մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը և մինչև հաջորդ տարվա ապրիլի 15-ը:

9.

Բնապահպանական և բնօգտագործման վճարները

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հասկացությունը և տեսակները սահմանված են «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գույացման նպատակով պետական բյուջե, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ համայնքի բյուջե, վճարվող պարտադիր վճար է, որը վճարվում է օրենքով սահմանված հետևյալ գործառույթներն իրականացնողների կողմից.

Շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) վնասակար նյութերի արտանետում, որի դիմաց բնապահպանական վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում շրջակա միջավայր արտանետված վնասակար նյութերի ծավալի հիման վրա: Վճարը հաշվարկվում է՝

- ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման յուրաքանչյուր տոննայի դիմաց,
- ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների յուրաքանչյուր տոննայի արտանետման համար,
- ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող, Հայաստանի Հանրապետությունում գրանցված և շահագործվող ավտոմեքենաներից և մեխանիզմներից վնասակար նյութերի արտանետման դիմաց՝ ըստ շարժիչի հզորության (այս վճարը վճարվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև դրանց տարեկան տեխնիկական գնմությունը),
- այլ պետություններում գրանցված Հայաստանի Հանրապետություն մուտք գործող կամ շահագործվող տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց՝ ըստ ավտոմեքենայի տեսակի և բեռնատարողության (վնասակար նյութերի արտանետման դիմաց այս վճարը վճարվում է Հայաստանի Հանրապետության տարածք դրանց մուտք գործելու պահին):

Արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրում, որի դիմաց վճարը հաշվարկվում է ելնելով հաշվետու ժամանակաշրջանում աղբյուրներում և արտադրական հարթակներում տեղադրված թափոնների ծավալներից և վտանգավորության դասից՝ դրանց տեղադրման յուրաքանչյուր տոննայի համար:

Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրություն կամ ներմուծում:

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է այդ ապրանքների մաքսային արժեքի հիման վրա և վճարվում է ներմուծելիս: Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է արտադրողը՝ իրացման շրջանառության հիման վրա և վճարում է հաշվետու ժամանակաշրջանում իրացված արտադրանքին համամասնորեն:

Բնապահպանական վճարների դրույքաչափերը սահմանված են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար տնտեսավարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց պետական բյուջե վճարվող վճար է, որը վճարվում է օրենքով սահմանված հետևյալ գործառույթներն իրականացնողների կողմից.

Չօգտագործում, որի դիմաց վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում բնական ջրադրյուններից օգտագործման նպատակով անմիջապես վերցրած ջրի ծավալի հիման վրա, իսկ ձկնաբուծական և խեցգետնաբուծական գործունեություն իրականացնող վճարողները վճարի հաշվարկն իրականացնում են օգտագործված ջրի ընդհանուր ծավալի 5 տոկոսի հիման վրա: Վճարը հաշվարկվում է՝

- մակերևութային (բացառությամբ Սևանա լճից) ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի օգտագործման համար,
- Սևանա լճից ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի օգտագործման համար,
- խմելու համար ոչ պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի արդյունահանման համար:

Պինդ օգտակար հանածոների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանում, որի դեպքում վճարը հաշվարկվում է՝

- ազնիվ մետաղների մարված պաշարների յուրաքանչյուր գրամի համար,

- գունավոր և հազվագյուտ մետաղների մարված պաշարների յուրաքանչյուր տոննայի համար,
- վառելիքաէներգետիկ հումքի մարված պաշարների յուրաքանչյուր տոննայի համար,
- երեսպատման քարերի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար,
- շինարարական քարերի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար,
- լցանյութերի և բալաստային հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար,
- շինանյութերի արտադրության հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար,
- գունագեղ քարերի մարված պաշարների յուրաքանչյուր կիլոգրամի համար,
- մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի մարված պաշարների յուրաքանչյուր միավորի համար,
- աղի և հանքային ջրերի արդյունահանված պաշարների համար:

Կենսապաշարների օգտագործում, որի դեպքում վճարը հաշվարկվում է՝

- փայտանյութի (ամտառանյութի) օգտագործման ծառի տեսակի յուրաքանչյուր խորանարդ մետրի օգտագործման համար,
- արդյունագործական նպատակով բույսերի յուրաքանչյուր միավորի օգտագործման համար,
- արդյունագործական նպատակով օգտագործվող պտուղների, հատապտուղների և ընկույզավորների յուրաքանչյուր կիլոգրամի օգտագործման համար,
- կենդանիների տեսակների՝ գյուղատնտեսական, արդյունագործական և սոցիալական նպատակներով յուրաքանչյուր միավորի օգտագործման համար,
- գյուղատնտեսական՝ խոտհունձի նպատակով անտառային ֆոնդի տարածքների յուրաքանչյուր հեկտարի միանվազ (միանգամյա) օգտագործման համար,

- գյուղատնտեսական՝ արածեցման նպատակով անտառային ֆոնդի տարածքների օգտագործման համար՝ յուրաքանչյուր գլխի համար յուրաքանչյուր օրվա կտրվածքով:

Բնօգտագործման վճարների դրույքաչափերը սահմանված են Կառավարության 30.12.1998թ. «Բնօգտագործման վճարների դրույքաչափերի մասին» N 864 որոշմամբ:

Բնապահպանական և բնօգտագործման վճարները հաշվարկվում և վճարվում են հետևյալ կարգով: Վճարողների կողմից վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները 2 օրինակից ներկայացվում են բնապահպանական մարմին գրանցման՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը, իսկ տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 25-ը: Գրանցված հաշվարկ-հաշվետվությունների երկրորդ օրինակները վճարողները նշված ժամկետներին հաջորդող 5 օրվա ընթացքում ներկայացնում են համապատասխան հարկային մարմին:

Հաշվարկ-հաշվետվություններ ներկայացնելը պարտադիր չէ մասնավորապես՝

- Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ ներմուծողների համար,
- իրավաբանական և ֆիզիկական անձանց համար՝ իրենց պատկանող ավտոմեքենաներից, մեխանիզմներից և շարժիչավոր լողամիջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման մասով:

Վճարողները հաշվարկված եռամսյակային վճարները վճարում են յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ, իսկ տարեկան վճարները՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող երրորդ ամսվա 1-ը:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով սահմանված են հետևյալ արտոնությունները.

- Հայաստանի Հանրապետությունում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար վճարից ազատվում են սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները՝ այդ ավտոմեքենաների համար,

- այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար վճարից ազատվում են Հայաստանի Հանրապետության մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում փոխադրումներ իրականացնողները,
- շրջակա միջավայրին վնաս պատճառող ներմուծվող ապրանքների համար վճարից ազատվում են Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ տեղափոխվող ապրանքները:

Բնապահպանական վճարների այլ արտոնությունները սահմանվում են օրենքով, իսկ բնօգտագործման վճարներինը՝ Կառավարության կողմից:

Պատասխանատվությունը օրենքի պահանջները խախտելու համար.

- ա) վճարումներն ուշացնելու համար վճարողներից գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պակաս մուծված գումարի 0.2%-ի չափով: Նշված տույժը կիրառվում է ժամանակին չվճարված վճարի գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) վճարման օբյեկտի գծով վճարի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար (բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար)։
- բ) վճարողների կողմից հարկային և լիազոր մարմիններ ներկայացվող հաշվարկ-հաշվետվությունները օրենքով սահմանված ժամկետից երկու ամսից ավելի ուշացնելու դեպքում հաջորդ յուրաքանչյուր 15 օրվա համար գանձվում է տուգանք՝ վճարման ենթակա վճարի ընդհանուր գումարի 5%-ի չափով (բայց ոչ ավելի այդ վճարի ընդհանուր գումարից)։
- գ) վճարը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու (սահմանված հաշվարկ-հաշվետվություններում վճարի գումարը ցույց չտալու, պակաս ցույց տալու կամ գործունեություն չիրականացնելու մասին կեղծ տվյալներ ներկայացնելու) դեպքում գանձվում է օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ թաքցված կամ պակաս ցույց տրված վճարի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50%-ի չափով, իսկ խախտումն

արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում վճարը կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում նաև տուգանք՝ վճարի ամբողջ գումարի չափով: Գործունեություն չիրականացնելու, ինչպես նաև վճարի օբյեկտ հանդիսացող գույք չունենալու դեպքում վճարողը ներկայացնում է հայտարարություն, որը համարվում է լիազոր և հարկային մարմիններ ներկայացվող փաստաթղթերի ամփոփ ձև:

- դ) թաքցված կամ պակաս ցույց տրված վճարը, ինչպես նաև օրենքով սահմանված տույժերը և տուգանքները պետական բյուջե, իսկ օրենքով նախատեսված դեպքում համայնքի բյուջե են վճարվում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

10. Ճանապարհային վճարը

Ճանապարհային վճարը սահմանված է «Ճանապարհային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Անհատ ձեռնարկատերը ճանապարհային վճար վճարող է համարվում, եթե բեռնատար տրանսպորտային միջոցների սեփականատեր է, իրեն պատկանող տրանսպորտային միջոցներով կամ օրենքով սահմանված գործունեությամբ զբաղվելու նպատակով օգտվում է ավտոմոբիլային ճանապարհներից:

Ճանապարհային վճարի տեսակներն են՝ այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը, ծանրաքաշ ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար վճարը, մեծ եզրաչափերով ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար վճարը և ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար վճարը:

11.

Ներմուծումը

Անհատ ձեռնարկատերը հարկերի վճարման պարտավորություն կարող է ունենալ նաև ներմուծում իրականացնելու դեպքում:

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի համաձայն ներմուծումը դա ապրանքների ներսերումն է Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք: Մաքսային տարածքն իր մեջ ներառում է Հայաստանի Հանրապետության ցամաքային, ջրային և օդային տարածքը:

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելիս մաքսային մարմինների կողմից գանձվում են մաքսային վճարներ, այդ թվում՝

- ա) մաքսատուրքեր,
- բ) մաքսավճարներ,
- գ) մաքսային մարմինների կողմից գանձվող՝ օրենքով սահմանված հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ (մասնավորապես՝ ԱԱՀ, ակցիզային հարկ, հաստատագրված, բնապահպանական և ճանապարհային վճարներ):

11.1.

Մաքսատուրքը

Մաքսատուրքերը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար օրենսգրքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե գանձվող պարտադիր վճարներ են:

Հայաստանի Հանրապետությունում ըստ գործառնության բնույթի կիրառվում են հետևյալ մաքսատուրքերը՝

- ա) արտահանման՝ վճարվում են Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների համար.
- բ) ներմուծման՝ վճարվում են Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար.

զ) սեզոնային՝ վճարվում են տարվա որոշակի ժամանակահատվածում առանձին ապրանքներ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանելու կամ այդ տարածք ներմուծելու համար:

Ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրք վճարելու որպես ուղեկցող բեռ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխել ապրանքներ, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը օրենսգրքով սահմանված չէ 0% և որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 50կգ, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 300 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը:

Ֆիզիկական անձինք կարող են, Կառավարության կողմից սահմանված կարգով, մաքսային սահմանով առանց մաքսատուրք վճարելու տեղափոխել միջազգային փոստային առաքումներով փոխադրվող ապրանքներ, որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 20կգ, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 100 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը:

Ֆիզիկական անձանց կողմից «ներմուծում՝ ազատ շրջանառության համար», «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար», «ժամանակավոր ներմուծում» և «վերաներմուծում» ռեժիմներով հայտարարագրված ակնհայտ առևտրային քանակության ապրանքները բաց թողնելու համար մաքսային մարմինները նրանցից պահանջում են՝ օրենքով սահմանված կարգով գրանցվել որպես Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձ, այլապես մաքսային մարմիններն արգելում են ապրանքների ներմուծումը:

Ակնհայտ առևտրային քանակության ապրանքների բնախրային չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետությունում ԱՏԳ ԱԱ վրա հիմնված և ներկայումս գործող մաքսատուրքի դրույքաչափերը սահմանված են 0% կամ 10%:

Արտահանման դեպքում բոլոր ապրանքատեսակների նկատմամբ կիրառվում է 0% դրույքաչափ:

Ներմուծման դեպքում, ելնելով ապրանքների բնույթից, կիրառվում է 0% կամ 10% մաքսատուրք: Ներմուծման 10%-ոց մաքսատուրքեր են դրված հիմնականում սննդամթերքի և այնպիսի պատրաստի արտադրատեսակների վրա, որոնց համարժեքներն արտադրվում են Հայաստանի Հանրապետությունում:

Հաշվարկվածից ավելի վճարված մաքսատուրքի գումարները, վճարողի ցանկությամբ, մաքսային մարմինների կողմից հաշվանցվում են մաքսային մարմիններին՝ վճարման ենթակա այլ պարտավորությունների հաշվին, կամ վերադարձվում են ոչ ուշ, քան վերադարձման մասին վճարողի դիմումն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում:

Ավելի գանձված մաքսատուրքի գումարների վերադարձման կամ այլ պարտավորությունների հաշվին հաշվանցման դիմումն ընդունվում է դրանց վճարումից հետո՝ երկու տարվա ընթացքում:

Ապրանքներ տեղափոխող անձանց կողմից չվճարված կամ թերի վճարված մաքսատուրքի գումարը մաքսային մարմինների կողմից գանձվում է դրա վճարման պարտավորության առաջացման պահից՝ 3 տարվա ընթացքում:

Մաքսատուրքի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողից գանձվում է տույժ՝ ժամանակին չվճարված մաքսատուրքի գումարի 0.15%-ի չափով (բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար):

11.2.

Մաքսավճարը

Մաքսավճարը օրենսգրքով սահմանված կարգով և չափով գանձվող, պետական բյուջեում հաշվառվող պարտադիր վճար է, որն օգտագործվում է մաքսային գործի զարգացման և մաքսային մարմինների նյութատեխնիկական և սոցիալական բազայի ապահովման նպատակով:

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների իրականացման (բացառությամբ ապրանքների գնման և հաշվառման) համար գանձվում է 3,5 հազ. դրամ մաքսավճար: Սահմանված 3,5 հազ. դրամ մաքսավճարը գանձվում է յուրաքանչյուր առանձին մաքսային ձևակերպման համար՝ յուրաքանչյուր բեռնամաքսային հայտարարագիր լրացնելու համար:

Ապրանքների գնման և հաշվառման համար մաքսավճար գանձվում է՝

- ա) մինևույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված մինչև մեկ տոննա քաշ ունեցող ապրանքների մաքսային հսկողության համար՝ 1,0 հազ. դրամ.

բ) միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված մեկ տոննայից ավելի քաշ ունեցող ապրանքների յուրաքանչյուր լրացուցիչ (կամ ոչ լրիվ) տոննայի համար՝ 0,3 հազ. դրամ:
Մաքսային մարմինների կողմից յուրաքանչյուր փաստաթղթի (ձևաթղթի) տրամադրման համար գանձվում է 1,0 հազ. դրամ մաքսավճար:

Հայաստանի Հանրապետության տարածքով ապրանքների մաքսային ուղեկցման համար յուրաքանչյուր հարյուր կիլոմետրի համար գանձվում է 10,0 հազ. դրամ մաքսավճար: Ընդ որում, ապրանքների տարանցիկ փոխադրման ժամանակ (բացառությամբ՝ օրենսգրքով նախատեսված և մաքսային ապահովման միջոցների կիրառման անհնարինության դեպքերի) ապրանքների մաքսային ուղեկցումը կատարվում է պարտադիր, իսկ մնացած դեպքերում՝ փոխադրողի ցանկությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա:

Մաքսային մարմինների կողմից պատասխանատու պահպանության վերցված ապրանքների պահպանման համար մաքսավճարը գանձվում է՝

ա) մինչև 1տ համար՝ օրական 1,0 հազ. դրամ.

բ) 1տ-ից ավելի յուրաքանչյուր լրացուցիչ (կամ ոչ լրիվ) տոննայի համար՝ օրական 0,3 հազ. դրամ:

Տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության համար մաքսավճարը գանձվում է՝

ա) մինչև 10 նստատեղով մարդատար ավտոմեքենաների համար՝ 2,0 հազ. դրամ.

բ) այլ տրանսպորտային միջոցների համար՝ 5,0 հազ. դրամ:

Հաշվարկվածից ավելի վճարված մաքսավճարի գումարները, վճարողի ցանկությամբ, մաքսային մարմինների կողմից հաշվանցվում են մաքսային մարմիններին՝ վճարման ենթակա այլ պարտավորությունների հաշվին, կամ վերադարձվում են ոչ ուշ, քան վերադարձման մասին վճարողի դիմումն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում:

Ավելի գանձված մաքսավճարի գումարների վերադարձման կամ այլ պարտավորությունների հաշվին հաշվանցման դիմումն ընդունվում է դրանց վճարումից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Ապրանքներ տեղափոխող անձանց կողմից չվճարված կամ թերի վճարված մաքսավճարի գումարը մաքսային մարմինների կողմից

գանձվում է դրա վճարման պարտավորության առաջացման պահից՝ երեք տարվա ընթացքում:

Մաքսավճարի վճարումն իրականացվում է համապատասխան ծառայությունների մատուցման պահից՝ 3-օրյա ժամկետում, բայց ապրանքների բացթողնման պահից ոչ ուշ:

Մաքսավճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողից գանձվում է տույժ՝ ժամանակին չմուծված մաքսավճարի գումարի 0.15%-ի չափով (բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար):

11.3.

Մաքսային մարմինների կողմից գանձվող հարկերը և հաստատագրված վճարները

Ինչպես արդեն ասվեց, ներմուծման դեպքում անհատ ձեռնարկատերը կարող է ունենալ ակցիզային և ավելացված արժեքի հարկերի, հաստատագրված վճարների, ինչպես նաև բնապահպանական և ճանապարհային վճարների գծով պարտավորություններ:

Ենթակցիզային ապրանքների ներմուծման ժամանակ մաքսային մարմինները հաշվարկում և պետական բյուջե են գանձում հասանելի **ակցիզային հարկի** գումարները: Մաքսային մարմինների կողմից ակցիզային հարկ գանձվում է գարեջուր, խաղողի և այլ գինիներ, գինեկոթ, վերմուտ և բուսական և արոմատիկ էքստրակտներ պարունակող խաղողի այլ գինիներ, խմորման ենթարկված այլ ըմպելիքներ, էթիլային սպիրտ, սպիրտային խմիչքներ, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ, հում նավթ և նավթամթերքներ, նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ (բացառությամբ բնական գազի) Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծող անհատ ձեռնարկատերերից:

Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար հարկվող օբյեկտ է հանդիսանում «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծումը:

Ակցիզային հարկով չեն հարկվում՝

- Հայաստանի Հանրապետությունից ենթաակցիզային ապրանքների օտարումը (իրացումը), եթե առկա է մաքսային

օրենսդրությամբ սահմանված կարգով լրացված բեռնամաքսային հայտարարագրի պատճենը՝ «Բացթողումը թույլատրված է» նշումով.

- «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմի տարբերվող՝ մաքսային ռեժիմներով Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծվող և այդ տարածքից արտահանվող ենթակապիզային ապրանքները:

Ուշադրություն. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ենթակապիզային ապրանքների համար անհատ ձեռնարկատերերի կողմից ակցիզային հարկը վճարվում է ներմուծման օրվանից 10 օրվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ենթակապիզային ապրանքների համար ևս Կառավարության 26.10.1999թ. N 662 որոշմամբ սահմանված է պարտադիր դրոշմավորման կարգ:

Հայաստանի Հանրապետություն դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող անհատ ձեռնարկատերերն ակցիզային դրոշմանիշերը ձեռք են բերում իրենց գրանցման վայրի տարածաշրջանային մաքսատանը, ներկայացնելով՝

ա) սահմանված ձևերով դիմում՝ ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար (2 օրինակից).

բ) օտարերկրյա պայմանադիր կողմի հետ կնքված պայմանագրի պատճենը (առկայության դեպքում՝ հավելվածներով և աղյուսակներով), իսկ պայմանագիրն օտար լեզվով կազմված լինելու դեպքում (հավելվածներով և աղյուսակներով)՝ նոտարական վավերացմամբ դրանց թարգմանության պատճենը, որի հիման վրա կատարվելու է պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ձեռքբերումը և հետագա ներմուծումը: Պայմանագրում նշվում է ներմուծման ենթակա ապրանքի անվանումը, տեսակը, տարան (փաթեթավորումը), քանակը և գինը.

գ) հաշվետվություն դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ տրամադրված ակցիզային դրոշմանիշերի օգտագործման մասին, էթե նախկինում ներմուծողի կողմից ստացվել են ակցիզային դրոշմանիշեր:

Մաքսային մարմինն ուսումնասիրում է դիմումը և դիմումին կից փաստաթղթերն ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար և, եթե դրանք բավարարում են սահմանված կարգի պահանջները, ապա դիմումն ստանալու օրվանից 5-օրյա ժամկետում ընդունվում է որոշում ակցիզային դրոշմանիշեր տրամադրելու մասին: Ակցիզային դրոշմանիշերը տրամադրվում են հատկացվող դրոշմանիշերի թվին համապատասխան՝ ներմուծողի վճարած գումարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը ներկայացնելուց հետո 1-օրյա ժամկետում:

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դրոշմավորման ենթակա էթիլային սպիրտի և ալկոհոլային խմիչքի արտադրանքի համար նախատեսված ակցիզային յուրաքանչյուր դրոշմանիշի ձեռքբերման համար վճարվում է 100 դրամ, ծխախոտի արտադրանքի համար՝ 25 դրամ:

Ակցիզային դրոշմանիշերի համար վճարված գումարը հանդիսանում է՝

ա) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքներ ներմուծողների համար՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի կանխավճար.

բ) Հայաստանի Հանրապետությունում ակցիզային հարկին փոխարինող հաստատագրված վճարով հարկման ենթակա ապրանքներ ներմուծողների համար՝ սահմանված կարգով պետական բյուջե վճարման ենթակա հաստատագրված վճարից նվազեցման ենթակա գումար:

Մաքսային մարմնի համապատասխան ստորաբաժանման պատասխանատու անձն ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար գումարի վճարման իսկությունն ստուգելուց հետո դիմումի 2 օրինակի վրա կատարում է «Գումարը վճարվել է» նշումը և հաստատում համապատասխան կնիքով:

Ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար դիմումի մեկ օրինակը տրվում է ներմուծողին, մյուս օրինակը և վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը մնում է մաքսային մարմնում՝ վերը նշված փաստաթղթերի հետ միասին:

Մաքսային մարմինն ակցիզային դրոշմանիշերը ներմուծողին տրամադրում է 90-օրյա ժամկետով: Մինչև 90-օրյա ժամկետի ավարտն օտարերկրյա պայմանադիր կողմի հետ կնքված համապա-

տասխան պայմանագրի չկատարման կամ մասնակի կատարման դեպքում ներմուծողի դիմումի հիման վրա մաքսային մարմինը երկարացնում է ակցիզային դրոշմանիշերի տրամադրման ժամկետը՝ դիմումում նշված ժամկետով (բայց ոչ ավելի, քան 90 օր), որի մասին գրավոր տեղեկացնում է դիմողին:

Ներմուծողը դրոշմանիշերն ստանալու 90 օրվան հաջորդող կամ դրոշմանիշերի տրամադրման ժամկետի երկարացման դեպքում, այդ ժամկետներին հաջորդող 10-օրյա ժամկետում մաքսային մարմին է ներկայացնում սահմանված ձևի հաշվետվություն դրոշմանիշերի օգտագործման մասին:

Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքներից և փոխադրամիջոցներից ԱԱՀ հաշվարկվում և գանձվում է մաքսային մարմինների կողմից (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության ներքին տարածք ներմուծվող օրենքով հաստատված ցանկում ընդգրկված այն ապրանքների, որոնց համար օրենքով սահմանված է մաքսատուրքի 0% դրույքաչափ և որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման):

Ուշադրություն. «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքով սահմանված ապրանքատեսակների ցանկին առանձնակի ուշադրություն պետք է դարձնեն պարզեցված հարկ վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերը, քանի որ եռամսյակի ընթացքում «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով 250,0 հազ. դրամը գերազանցող արժեք ունեցող այդպիսի ապրանքներ ներմուծելիս նրանք դադարում են հանդիսանալ պարզեցված հարկ վճարող:

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար ներմուծման պահին ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց՝ օրենքով սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքի և գանձվող մաքսատուրքի ու ակցիզային հարկի գումարը:

Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից ԱԱՀ-ի հաշվարկումը և գանձումը հիմնավորվում է մաքսային ձևակերպման ժամանակ լրացվող մաքսային հայտարարագրերով և վճարային փաստաթղթերով (վճար-

ման հանձնարարագիր, անդորրագիր կամ վճարումը հաստատող այլ փաստաթղթեր):

ԱԱՀ վճարողների կողմից «ԱՏԳ ԱԱ - 8422 (բացառությամբ՝ 842211000 և 842290100 ծածկագրերի), 8441, 8452 (բացառությամբ՝ 845210 և 845290000 ծածկագրերի), 8453, 8475, 250510, 250900, 251820, 2836, 39162010, 76041090, 8419, 8426, 8429, 8430, 8435, 8443, 8478, 8479, 85023100, 870410 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների հաշվարկած ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգվում է՝

- ա) 1 տարի ժամկետով, եթե նշված ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների մաքսային արժեքը պակաս է 70,0 մլն. դրամից,
- բ) 2 տարի ժամկետով, եթե նշված ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների մաքսային արժեքը կազմում է 70,0 մլն. դրամ և ավելի:

Ընդ որում՝ ԱԱՀ-ի պարտավորությունը հաշվարկվում է՝

- ա) եթե մինչև վերը նշված ժամկետի ավարտը հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված հարկվող գործարքների համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված և պետական բյուջե վճարված ԱԱՀ-ի գումարները գերազանցում են ներմուծված ապրանքների համար ԱԱՀ-ի հետաձգված պարտավորությունների գումարը, ապա այդ ժամկետի ավարտից հետո հարկ վճարողները մաքսային մարմինների հաշվարկած ԱԱՀ-ի հետաձգված գումարների մասով ԱԱՀ վճարելու պարտավորություն չեն ունենում.
- բ) եթե մինչև վերը նշված ժամկետի ավարտը հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված հարկվող գործարքների համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված և պետական բյուջե վճարված ԱԱՀ-ի գումարները պակաս են ներմուծված ապրանքների համար ԱԱՀ-ի հետաձգված պարտավորությունների գումարից, ապա այդ տարբերությունը հարկ վճարողի կողմից ենթակա է վճարման պետական բյուջե՝ այդ ժամկետը լրանալու հաշվետու ժամանակաշրջանում:

Անհատ ձեռնարկատերերը բենզին և դիզելային վառելիք ներմուծելու դեպքում վճարում են «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Հայաստանի Հանրապետություն ներմուծվող բենզինի և դիզելային վառելիքի համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաստատագրված վճարներ, անմիջական ներմուծողների կողմից իրացվող բենզինի և դիզելային վառելիքի համար եկամտահարկին փոխարինող **հաստատագրված վճարներ**:

Հաստատագրված վճարի չափը ներմուծվող յուրաքանչյուր 1տ համար սահմանվում է՝

- բենզինի համար՝ 112,0 հազ. դրամ,
- դիզելային վառելիքի համար՝ 32,5 հազ. դրամ:

Վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից անկախ՝ եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարի ամսական չափը սահմանվում է՝

- բենզինի համար՝ տվյալ ամսվա բենզինի իրացումից ստացվող հասույթի (հաշվեգրման եղանակով հաշվարկված) 1%-ի չափով (բայց ոչ պակաս իրացված յուրաքանչյուր մեկ տոննայի հաշվով 2,5 հազ. դրամ),
- դիզելային վառելիքի համար՝ տվյալ ամսվա դիզելային վառելիքի իրացումից ստացվող հասույթի (հաշվեգրման եղանակով հաշվարկված) 1%-ի չափով (բայց ոչ պակաս իրացված յուրաքանչյուր մեկ տոննայի հաշվով 1,5 հազ. դրամ):

Հայաստանի Հանրապետություն ներմուծված բենզինի և դիզելային վառելիքի իրացումն ազատվում է ԱԱՀ-ից:

Արտադրական և այլ առևտրային նպատակներով բենզին կամ դիզելային վառելիք ձեռք բերելու (բացառությամբ՝ իրացման համար) դեպքում՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից կարող են հաշվանցել մատակարարի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթում նշված գումարի (բենզինի կամ դիզելային վառելիքի ձեռքբերման արժեքի) 16.67%-ը (նշյալ հաշվանցումն իրականացվում է ԱԱՀ-ի հաշվանցման մեխանիզմով):

Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճար վճարողների կողմից վճարման ենթակա հաստատագրված վճարի

գումարները թաքցնելու (կամ պակաս ցույց տալու) համար վճարողներից գանձվում է թաքցված (կամ պակաս ցույց տրված) հաստատագրված վճարի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 100%-ի չափով:

«Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սիգարների, սիգարելաների և սիգարետների համար ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և մաքսատուրքի, և Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի համար՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաստատագրված վճարներ, դրանց հաշվարկման և վճարման կարգ:

Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետություն ծխախոտի արտադրանք ներմուծող և հանրապետությունում ծխախոտի արտադրանք արտադրող անձինք:

Ծխախոտի հիմնական արտադրատեսակների համար սահմանված հաստատագրված վճարների չափերը՝

Ապրանքի ծածկագիրն՝ ըստ ԱՏԳ ԱԱ	Ապրանքի անվանումը	Հաստատագրված վճարի չափը (դրամ 1,000 հատի համար)	
		Ներմուծվող արտադրանքի համար	Ներքին արտադրության ապրանքի համար
2402 10 000 11	սիգարներ	550.000	300.000
2402 10 000 12	սիգարելաներ	15.000	11.000
2402 20 900 11	սիգարետներ՝ ֆիլտրով	5.500	4.000
2402 20 900 12	սիգարետներ՝ առանց ֆիլտրի	3.000	1.750

Մաքսային մարմինների կողմից հաշվարկվում և գանձվում է **ճանապարհային վճար**՝

- այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար,
- ծանրաքաշ ավտոտրանսպորտային միջոցներով, ավտոմոբիլային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար,

- մեծ եզրաչափերով ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար:

Մաքսային մարմինների կողմից հաշվարկվում և գանձվում են բնապահպանական վճարներ՝

- վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետող ապրանքների ներմուծման համար,
- շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման համար:

12.

Հարկային գործակալը, ապահովադիրը

Հայաստանի Հանրապետության առանձին հարկատեսակների մասին օրենքներով սահմանված դեպքերում հարկի վճարման պարտավորությունը կարող է դրվել **հարկային գործակալի** վրա:

Հարկային գործակալը հարկ վճարողներին եկամուտներ վճարող (հատկացնող կամ բնամթերային ձևով տրամադրող) այն անհատ ձեռնարկատերն է, որի վրա օրենքի համաձայն, դրված է հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս (հատկացնելիս կամ տրամադրելիս) նրանց եկամուտներից հարկերը (այդ թվում՝ անուղղակի) հաշվարկելու, պահելու (գանձելու) և պետական (համայնքների) բյուջեներ վճարելու պարտավորությունը: Հարկային օրենսդրությանը համաձայն, անհատ ձեռնարկատերը հարկային գործակալի պարտավորություններ կարող է ունենալ ԱԱՀ-ի, ոչ ռեզիդենտի շահութահարկի և ֆիզիկական անձանց եկամտահարկի գծով:

Ապահովադիրը դա այն անհատ ձեռնարկատերն է, ով օրենքով սահմանված կարգով ու չափերով սոցիալական վճարումներ է կատարում և փոխանցում (վճարում) պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե: Ընդ որում, եթե անհատ ձեռնարկատերը հանդիսանում է գործատու, նա պարտավոր է ապահովադիր հանդիսանալ նաև այն ֆիզիկական անձանց համար, որոնց հետ նա կնքնել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրեր և որոնց աշխատանքը (ծառայությունները) նա օգտագործում է իր գործունեության իրականացման կամ ապահովման համար:

12.1.

Ավելացված արժեքի հարկը

Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված օտարերկրյա անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ով հարկվող գործարքներ իրականացնելիս (ներառյալ այդ անձանց սեփականությունը հանդիսացող ապրանքներ ներմուծելիս) պայմանագրային հարաբերությունների կողմ (ներառյալ կոնտրագենտ) հանդիսացող անհատ ձեռնարկատերը այդ գործարքների գծով օտարերկրյա անձանց փոխարեն կրում է հարկային պարտավորություն՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում: Այդ գործարքների գծով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է ընդհանուր սահմանված կարգով:

Նշված դեպքերում հարկային պարտավորություն կրելիս անհատ ձեռնարկատերը Հայաստանի Հանրապետությունում չգրանցված օտարերկրյա անձի անունից կարող է օրենքով սահմանված կարգով դուրս գրել հարկային հաշիվներ, որոնցում, որպես ապրանք առաքող կամ ծառայություն մատուցող անձի՝ հարկ վճարողի հաշվառման համար, նշում է իր համապատասխան հաշվառման համարը: Նշված կարգով դուրս գրված հարկային հաշիվները համարվում են դուրս գրված մատակարարի կողմից:

12.2.

Ոչ ռեզիդենտի շահութահարկը

Անհատ ձեռնարկատիրոջ կողմից հայաստանյան աղբյուրներից օտարերկրյա կազմակերպությանը (ոչ ռեզիդենտին) եկամուտներ վճարվելու (բնամթերային ձևով հատկացվելու) դեպքում՝ այդ կազմակերպության փոխարեն, եկամտի վճարման աղբյուրի մոտ առաջանում է շահութահարկի պահման և պետական բյուջե փոխանցման պարտավորություն, այսինքն անհատ ձեռնարկատերը տվյալ դեպքում հանդիսանում է հարկային գործակալ: Որպես հարկային գործակալ անհատ ձեռնարկատերը շահութահարկը պահում (զանձում) է հետևյալ չափերով՝

Եկամտի տեսակը	Հարկի չափը
ապահովագրական հարուցում, վերաապահովագրական վճար և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտ	5%
շահաբաժին, փոկոս, ռոյալթի, գույքը վարձակալության փախույց ստացած եկամուտ, գույքի արժեքի հավելած և այլ եկամուտ	10%

Ոչ ռեզիդենտի արտաքին տնտեսական գործունեության հետ կապված եկամուտը Հայաստանի Հանրապետությունում հարկման ենթակա չէ: Արտաքին տնտեսական գործունեություն է համարվում բացառապես օտարերկրյա կազմակերպության (ոչ ռեզիդենտի) անունից իրականացված, նրան պատկանող ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներկրելու հետ կապված (ապրանքների մաքսային փաստաթղթերի առկայության և տվյալ գործառնությունում ձեռնարկատիրական գործակալ-միջնորդների բացակայության դեպքում) գործունեությունը, որի դեպքում անհատ ձեռնարկատերը ապրանքների սեփականատեր է դառնում մինչև Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելը:

Եթե հայաստանյան աղբյուրներից օտարերկրյա կազմակերպությանը վճարվող եկամուտները Հայաստանի Հանրապետությունում գտնվող նրա ստորաբաժանման գործունեության արդյունք են, ապա ստորաբաժանումը հարկային գործակալին ներկայացնում է Հայաստանի Հանրապետության համապատասխան հարկային տեսչության մարմնում հաստատված տեղեկանք՝ հարկային մարմիններում հաշվառված լինելու և ՀՎՀՀ ունենալու մասին ու ազատվում է աղբյուրի մոտ շահութահարկի պահումից (գանձումից), այսինքն՝ տվյալ դեպքում եկամուտը վճարող անհատ ձեռնարկատերը չի իրականացնում հարկային գործակալի գործառույթ:

Անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտի վճարման աղբյուրի մոտ պահված (գանձված) շահութահարկի գումարը եկամտի վճարման ամսվան հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Միաժամանակ՝ տվյալ եռամսյակին հաջորդող եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ անհատ ձեռնարկատերը իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմին պարտավոր է ներկայացնել սահմանված ձևով Ամփոփ հաշվարկ պահված և բյուջե փոխանցված շահութահարկի գումարների մասին:

12.3.

Եկամտահարկը

Անհատ ձեռնարկատերը ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս, որպես հարկային գործակալ, այդ եկամուտներից պետք է հաշվարկի, պահի (գանձի) և բյուջե փոխանցի եկամտահարկ:

Եկամուտները կարող են վճարվել ինչպես դրամական (կանխիկ կամ անկանխիկ), այնպես էլ բնամթերային (ոչ դրամական) ձևով: Բնամթերային ձևով եկամուտներ վճարելիս այդ եկամուտները հաշվի են առնվում պետական հաստատագրված (կարգավորվող), իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազատ (շուկայական) գներով՝ Կառավարության 02.07.2001թ. N 590 որոշմամբ սահմանված կարգով:

Ֆիզիկական անձանց եկամուտներ հաշվարկելիս անհատ ձեռնարկատերը՝ հարկային գործակալի պարտականությունը կատարելու համար, պետք է հաշվի առնի այդ անձանց ինքնությունը (Հայաստանի Հանրապետության քաղաքացի, օտարերկրացի, անհատ ձեռնարկատեր):

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող **Հայաստանի Հանրապետության քաղաքացու** յուրաքանչյուր ամսում հաշվարկված համախառն եկամտից (դա տվյալ ամսում այդ քաղաքացուին հաշվարկված բոլոր տեսակի եկամուտների, օրինակ՝ աշխատավարձ, պարգևատրություն, օգնություն և այլն, հանրագումարն է) հարկային գործակալը կատարում է նվազեցումներ օրենքով սահմանված **նվազեցվող եկամուտների, անձնական նվազեցման**, ինչպես նաև **պարտադիր սույիալական ապահովագրության վճարի** (ԱՎՈՒՄ-ի 3%-ի) չափով՝ որոշելով ամսական հարկվող եկամտի գումարը:

Նվազեցվող եկամուտների տեսակները սահմանված են «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9, 10 և 11 հոդվածներով, և նվազեցումը կատարում է եկամուտը վճարող հարկային գործակալը, այսինքն՝ այդ եկամուտներից (կամ դրանց նվազեցվող չափից) չի հաշվարկվում եկամտահարկ:

Անձնական նվազեցումը սահմանված է ամսական 20,0 հազ. դրամ գումարով, և Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար կատարվում է եկամուտը վճարող յուրաքանչյուր հարկային գործակալի կողմից:

Այսպիսով՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացույց յուրաքանչյուր ամսում հաշվարկված աշխատանքի վարձատրության (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերով) և դրան հավասարեցված եկամուտների գումարից ամսական հարկվող եկամտի գումարը հարկային գործակալը որոշում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Հարկվող եկամուտ} = \\ = \text{Համախառն եկամուտ} - \text{Նվազեցումներ} > 0$$

Ամսական հարկվող եկամտի գումարից եկամտահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով՝

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 80.000 դրամ	Հարկվող եկամտի 10%
80.000 դրամից ավելի	8.000 դրամին գումարած 80.000 դրամը գերազանցող գումարի 20%

Բացառություն են կազմում ռոյալթիները, տոկոսները, վարձակալական վճարները և ֆիզիկական անձանցից գույք ձեռք բերելու դիմաց (բացառություն են կազմում գյուղատնտեսական մթերք արտադրողից ձեռք բերվող գյուղմթերքը և արժեթղթերի ձեռքբերումը, որոնց դիմաց վճարված եկամուտը նվազեցվող է) վճարվող եկամուտները, որոնց հարկումը հարկային գործակալի կողմից կատարվում է առանց որևէ նվազեցման՝ 10% դրույքաչափով:

Օտարերկրացիների (օտարերկրյա քաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք) եկամուտներ վճարելիս հարկային գործակալը եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկի պահում չի իրականացնում, եթե հայաստանյան աղբյուրներից վճարվող եկամուտները ձեռնարկատիրական գործունեության արդյունք են (այսինքն, այդ օտարերկրացին հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատեր) կամ էլ վճարված եկամուտները կապված են օտարերկրացու կողմից իրականացված արտաքին տնտեսական գործունեության հետ (դա՝ օտարերկրացու անունից իրականացված, նրան պատկանող ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներկրելու հետ կապված գործունեությունն է, որի դեպքում Հայաստանի Հանրապետության

հարկային ռեզիդենտն ապրանքների սեփականատեր է դառնում մինչև Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելը): Մնացած դեպքերում օտարերկրացուն եկամուտներ վճարելիս հարկային գործակալ հանդիսացող անհատ ձեռնարկատերը պարտավոր է հաշվարկել, պահել (գանձել) և բյուջե փոխանցել եկամտահարկ: Ընդ որում՝ եկամտահարկը հաշվարկվում է եկամտի ամբողջական գումարից (առանց որևէ նվազեցում կատարելու):

Այսպիսով՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող օտարերկրացու յուրաքանչյուր ամսվա հարկվող եկամտի որոշման բանաձևը ունի հետևյալ տեսքը՝

Հարկվող եկամուտ = Համախառն եկամուտ

Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված եկամուտների գումարից եկամտահարկը հաշվարկվում է վերը բերված ամսական սանդղակի դրույքաչափերով, իսկ եկամտի ներքոնշված տեսակները հարկվում են հետևյալ դրույքաչափերով.

Եկամտի տեսակը	Հարկի չափը
ապահովագրական հարուցում և փոխադրման (ֆոխսփոխ) դիմաց եկամուտ	5%
տրոխոս, ռոյալթի, գույքը վարձակալության տրախոս դիմաց եկամուտ, գույքի արժեքի հավելած և հայաստանյան արդյուններից վճարվող այլ եկամուտներ	10%

Օտարերկրացուն եկամուտներ վճարելու դեպքում հարկային գործակալը պարտավոր է եկամտի վճարման եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ իր հաշվառման վայրի հարկային մարմնին գրավոր ներկայացնել սահմանված ձևով **Տեղեկություն**՝ տվյալ եռամսյակում այդ անձին վճարված եկամուտների և պահված եկամտահարկի մասին:

Ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) հարկի գումարները ֆիզիկական անձանցից կարող են պահվել ոչ ավելի, քան վերջին 3 ամսվա համար, իսկ հարկերի սահմանված չափից ավելի պահված (գանձված) գումարները հաշվանցվում են առաջիկա պահումների հաշվին կամ վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող 3 օրացույցային տարվա համար: Սահմանված չափից ավելի գանձված

գումարները վերադարձնելու մասին ֆիզիկական անձի գրավոր դիմում տալը կասեցնում է նշված ժամկետի ընթացքը:

Եթե անհատ ձեռնարկատերը եկամուտ է վճարում մեկ այլ **անհատ ձեռնարկատիրոջ**, որի հետ կնքված է քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր (կամ կազմվել է՝ դրան ըստ էության փոխարինող հաշիվ-ապրանքագիրը), որտեղ նշված են անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ-ն, պետական գրանցման վկայականի համարը, անձնագրի տվյալները, Հայաստանի Հանրապետությունում բնակության հասցեն, ապա եկամտահարկ հաշվարկելու և պահելու պարտավորություն չի առաջանում, այսինքն տվյալ դեպքում հարկային գործակալի գործառույթ օրենքով նախատեսված չէ: Այդ դեպքերում եկամուտը վճարող անհատ ձեռնարկատերը պարտավոր է իր գրանցման վայրի հարկային մարմին ներկայացնել սահմանված ձևի տեղեկություն հաշվետու եռամսյակում այդ անհատ ձեռնարկատիրոջը վճարված եկամուտների վերաբերյալ:

***Ուշադրություն.** Տեղեկությունները ներկայացվում են հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ, ընդ որում յուրաքանչյուր չներկայացված տեղեկության համար օրենքով սահմանված է տուգանք՝ 25,0 հազ. դրամի չափով:*

Այն դեպքում, երբ հարկային գործակալը փաստաթղթերով չհիմնավորված (միակողմանի գնման ակտով շուկայից ապրանք ձեռք բերելիս) եկամուտ է վճարում, այսինքն բացակայում է անհատ ձեռնարկատիրոջ հետ վերը նշված ձևով կնքված գրավոր պայմանագիրը կամ ֆիզիկական անձի հետ կնքված քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիրը (անձնագրի տվյալների և Հայաստանում բնակության (հաշվառման) հասցեի պարտադիր նշումով), անհատ ձեռնարկատերը պարտավոր է վճարվող եկամտի գումարից՝ առանց հաշվի առնելու որևէ նվազեցում, հաշվարկել, պահել (գանձել) և բյուջե փոխանցել 3% դրույթաչափով եկամտահարկ:

Հարկային գործակալը պահված (գանձված) եկամտահարկի գումարը պարտավոր է վճարել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ֆիզիկական անձանց եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ:

Հարկային գործակալը եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ սահմանված ձևով իր գտնվելու (հաշվառման)

վայրի հարկային մարմին է ներկայացնում **Հաշվարկ**՝ անցած եռամս-
յակի յուրաքանչյուր ամսում ֆիզիկական անձանց վճարված եկա-
մուտների և պահված եկամտահարկի գումարների մասին: Ընդ որում,
նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված
Հաշվարկներում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում
կարող են հարկային մարմին ներկայացվել ճշտված հաշվարկներ,
որի հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար
հարկային պարտավորությունների վերահաշվարկ: Սակայն, հարկա-
յին գործակալի կողմից **Ճշտված հաշվարկներ** չեն կարող ներկա-
յացվել հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգման կամ
արդեն իսկ ստուգված ժամանակահատվածների համար:

Հարկային գործակալը, հարկ վճարողներին համանման, կրում է
պատասխանատվություն հարկային օրենսդրությունը խախտելու
համար:

Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպ-
քում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հար-
կային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի
գումարի 0.15%-ի չափով:

Նշված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գու-
մարների (այդ թվում նաև հարկային օրենսդրությամբ սահմանված
դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կան-
խավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով
հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հար-
կի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ
ժամանակաշրջանի համար (բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար):

Հարկ վճարողների (հարկային գործակալների) կողմից հարկա-
յին տեսչություն ներկայացվող հաշվարկը (հայտարարագիրը) հար-
կային օրենսդրությամբ սահմանված ժամկետից 2 ամսից ավել ուշաց-
նելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա հա-
մար հարկ վճարողից (հարկային գործակալից) գանձվում է տուգանք՝
դրա հետևանքով չմուծված հարկի ընդհանուր գումարի 5 %-ի չափով
(բայց ոչ ավել, քան այդ հարկի ընդհանուր գումարն է):

Հարկային օրենսդրությամբ և Կառավարության որոշումներով
նախատեսված հաշվառում և (կամ) գրանցումներ չվարելու կամ սահ-
մանված կարգի խախտումներով այն վարելու, հաշվարկները, հայ-
տարարագրերը և հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ

վիաստաթղթերն ու տեղեկությունները սխալ կազմելու համար հարկ վճարողից (հարկային գործակալից) գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով բյուջե չմուծված կամ պակաս մուծված հարկերի գումարի 10%-ի չափով:

Հարկվող օբյեկտը թաքցնելու (կամ պակաս ցույց տալու) դեպքում հարկ վճարողներից (հարկային գործակալներից) գանձվում է թաքցված (կամ պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի համար նախատեսված (հարկային մարմնի կողմից հաշվարկված) հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50%-ի չափով, իսկ հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո 1 տարվա ընթացքում նույն հարկատեսակի գծով հարկվող օբյեկտը կրկին թաքցնելու (կամ պակաս ցույց տալու) դեպքում՝ տուգանք՝ հարկի ամբողջ գումարի չափով, եթե հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

Հարկվող օբյեկտը թաքցնելը (կամ պակաս ցույց տալը)՝ հարկային մարմին ներկայացված տվյալ հարկատեսակի հաշվարկներում (հայտարարագրերում) հարկվող օբյեկտը ցույց չտալը (պակաս ցույց տալը) կամ էլ գործունեություն չիրականացնելու (հարկվող օբյեկտներ չառաջանալու) մասին կեղծ տվյալներ ներկայացնելն է:

Հարկ վճարողները թաքցրած (կամ պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի համար հարկի գումարը, ինչպես նաև հաշվարկված տույժերը և տուգանքները պետական բյուջե են վճարում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո 10-օրյա ժամկետում:

Հարկային պարտավորությունների գծով գումարների մուծումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում հարկային մարմինը իրավունք ունի սահմանված կարգով դատարան ներկայացնել հայցադիմում՝ հարկ վճարողի գույքի բռնագանձման համար: Հարկերի վճարումն ուշացնելու դեպքում հարկային մարմինը (բացառությամբ՝ Կառավարության սահմանած դեպքերի) հարկերի վճարման համար սահմանված ժամկետից 183 օրվա ընթացքում սահմանված կարգով հարկ վճարողին անվճարունակ ճանաչելու հայցով դիմում է դատարան: Ընդ որում՝ այդ հայցից հարկային մարմինը չի կարող հրաժարվել, քանի դեռ հարկային պարտավորություններն ամբողջությամբ մարված չեն:

Չկատարված հարկային պարտավորության չափը 500,0 հազար և ավելի դրամ կազմելու դեպքում Կառավարության կողմից սահմանված կարգով հարկային մարմնի ղեկավարն իրավունք ունի հարկ վճարողի հարկային պարտավորությանը համարժեք գույքի վրա արգելանք դնել մինչև դատարանի կողմից վճռի կայացումը (բացառությամբ՝ օրենքով սահմանված այն գույքի, որի նկատմամբ բռնագանձում չի կարող տարածվել, կամ որի պահպանման ժամկետը չի գերազանցում 30 օրը): Արգելանքն առաջնահերթության կարգով կիրառվում է նախ՝ հարկ վճարողի բանկային հաշիվների նկատմամբ, ապա՝ հարկ վճարողի անշարժ գույքի նկատմամբ, այնուհետև՝ հարկ վճարողի այլ ակտիվների նկատմամբ:

12.4.

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները

Ինչպես արդեն ասվեց, եթե անհատ ձեռնարկատերը հանդիսանում է գործատու, այսինքն ֆիզիկական անձանց հետ պայմանագրեր (աշխատանքային, քաղաքացիաիրավական) կնքելու միջոցով նրանց ներգրավվում է որոշակի աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) մեջ, նա պարտավոր է հանդիսանալ ապահովադիր նաև այդ անձանց համար և կատարել «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գործատուների վրա դրված պարտականությունները՝ հաշվարկել, պահել (գանձել) և պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե փոխանցել պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ:

Ֆիզիկական անձանց եկամուտներ հաշվարկելիս անհատ ձեռնարկատերը՝ ապահովադրի պարտականությունը կատարելու համար, պետք է հաշվի առնի այդ անձանց ինքնությունը (Հայաստանի Հանրապետության քաղաքացի, օտարերկրացի, անհատ ձեռնարկատեր), քանի որ օտարերկրացիներին և Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող անհատ ձեռնարկատերերին (կնքված պայմանագրերը կամ՝ դրանց ըստ էության փոխարինող հաշիվ-ապրանքագրերը, պետք է պարունակեն այդ անձանց ինքնությունը հաստատող բոլոր վավերապայմանները՝ անձնագրային տվյալները, Հայաստանի Հանրապետությունում բնակության հաս-

յեն, անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ-ն, վկայականի համարը և այլն) վճարվող եկամուտների մասով գործատուներն ազատված են ապահովադրի պարտականությունների կատարումից: Այսինքն՝ անհատ ձեռնարկատերն ապահովադրի պարտականությունը կատարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ կնքված պայմանագրերով (աշխատանքային, քաղաքացիաիրավական) վճարվող աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված միջոցների մասով: Ընդ որում՝ այդ աշխատանքների (ծառայությունների) դիմաց վճարումը կարող է կատարվել ինչպես դրամական, այնպես էլ բնաիրային (ոչ դրամական) ձևով:

Ուշադրություն. Բնաիրային ձևով ստացված եկամուտների հաշվարկման կարգը, ինչպես նաև աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների) ցանկը հաստատված են Կառավարության 08.06.1998թ. «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 352 որոշմամբ:

Գործատուները աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին յուրաքանչյուր ամիս հաշվարկված աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրան հավասարեցված եկամուտների (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների դիմաց հաշվարկված եկամուտների) նկատմամբ պարտավոր են կատարել սոցիալական վճարներ՝ անկախ դրանց վճարված լինելու կամ չլինելու հանգամանքից: Այսինքն՝ ի տարբերություն եկամտահարկի, երբ աշխատավարձից հաշվարկված եկամտահարկի պահման (զանձման) և պետական բյուջե փոխանցման պարտավորությունն անմիջականորեն կախված է այդ աշխատավարձի փաստացի վճարման հետ, սոցիալական վճարի կատարման պարտավորությունը առաջանում է արդեն իսկ աշխատավարձի հաշվարկման պահից:

Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ և դրան հավասարեցված եկամուտներ են համարվում՝

- ա) աշխատավարձը (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ վարձատրություն), ներառյալ՝
- արտաժամյա աշխատանքի վարձատրությունը,
 - գիշերային աշխատանքի վարձատրությունը,
 - ոչ աշխատանքային (հանգստյան, տոնական, հիշատակի) օրերին կատարված աշխատանքի վճարումը,
 - լրավճարները, հավելավճարները (այդ թվում՝ գիտական աստիճանների համար) և պարգևատրումները (անկախ վճարման պարբերականությունից և ֆինանսավորման աղբյուրներից),
 - աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերում տրվող փոխհատուցման և օգնության գումարների),
 - պարապուրդի ժամանակ վճարումը,
 - օրինական գործադուլին մասնակցող աշխատողներին վճարումը,
 - լրացուցիչ և հատուկ ընդմիջումների վճարումը,
 - առողջության ստուգման համար ծախսվող ժամանակի համար վճարումը (եթե աշխատողի առողջության ստուգումը պարտադիր է և պայմանավորված է աշխատանքի բնույթով),
 - աշխատանքի այլ վայր փոխադրվելու կամ այլ վայրում աշխատանքի ընդունվելու դեպքում տեղափոխման համար նախապատրաստվելու և նոր վայրում տեղավորվելու ժամանակահատվածի համար վարձատրությունը.
- բ) ամենամյա (նվազագույն, երկարացված, լրացուցիչ) և նպատակային (ուսումնական, պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար) տրամադրվող վճարովի արձակուրդի համար, ինչպես նաև աշխատողին աշխատանքից ազատելու ժամանակ ամենամյա արձակուրդի տրամադրման դեպքում վճարվող աշխատավարձը.
- գ) նախկին աշխատանքում վերականգնվելու դեպքում հարկադիր պարապուրդի դիմաց վճարված աշխատավարձը.

դ) հեղինակային վարձատրությունը (բացառությամբ ռոյալթի-ների):

Քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ան-հատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կա-տարվող աշխատանքներից և մատուցվող ծառայություններից ստաց-վող եկամուտներն են, մասնավորապես՝

- կապալի (այդ թվում՝ շինարարական, նախագծային և հետա-գոտական աշխատանքների կապալի) պայմանագրերի շրջա-նակներում աշխատանքի վարձատրությունը,
- մանկավարժական, փորձարարական-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանա-գրերի շրջանակներում աշխատանքի վարձատրությունը,
- հանձնարարության և գործակալության պայմանագրերի շրջա-նակներում ծառայությունների դիմաց վճարումը,
- պահատվության պայմանագրերի շրջանակներում ծառայու-թյունների դիմաց վճարումը,
- փոխադրման և տրանսպորտային առաքման պայմանագրերի շրջանակներում ծառայությունների դիմաց վճարումը:

Քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա գիտական և ստեղծագործական աշխատանքների դիմաց եկամուտները չեն դիտվում որպես աշխատանքի վարձատրությանն ուղղված կամ դրանց հավասարեցված եկամուտներ:

Գործատուները յուրաքանչյուր աշխատողի (այդ թվում՝ քաղա-քացիաիրավական պայմանագրով աշխատողի) համար սույնալա-կան վճարները կատարում են հետևյալ չափերով.

Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափը	Սոցիալական վճարի չափը
մինչև 20000 դրամ	7000 դրամ
20000-ից մինչև 100000 դրամ	7000 դրամ գումարած 20000 դրամը գերազանցող գումարի 15%-ը
100000 դրամից ավելի	19000 դրամ գումարած 100000 դրամը գերազանցող գումարի 5%-ը

Գործատուների վրա դրված է նաև աշխատանքային պայմանագրերի շրջանակներում վարձու աշխատողների աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 3%-ի չափով սոցիալական վճարների կատարման պարտականությունը: Քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների համար գործատուները նշված չափով սոցիալական վճարներ չեն կատարում:

Օրինակ. Անհատ ձեռնարկատերն աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող ՀՀ քաղաքացուն 2006թ. հուլիսի 4-ին հաշվարկում և վճարում է հունիս ամսվա աշխատավարձ՝ 70,0 հազ. դրամ գումարով: 2006թ. հուլիսի 7-ին այդ քաղաքացուն հաշվարկվում է հունիս ամսվա պարգևատրում՝ 40,0 հազ. դրամ գումարով: Հունիս ամսվա համար կատարվում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափի և սոցիալական վճարի հաշվարկ՝ ելնելով հունիսի համար ապահովագրի կողմից այդ քաղաքացուն հաշվարկված աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների (ԱՎՈՒՄ) ընդհանուր գումարից՝

- ԱՎՈՒՄ (70,0+40,0)՝ 110,0 հազ. դրամ,
- գործատուի սոցիալական վճար (19,0+(110,0-100,0)×5%)՝ 19,5 հազ. դրամ,
- վարձու աշխատողի համար սոցիալական վճար (110,0×3%)՝ 3,3 հազ. դրամ,
- ընդամենը սոցիալական վճար (19,5+3,3)՝ 22,8 հազ. դրամ:

Հունիս ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄ-ը (110,0 հազ. դրամ) և սոցիալական վճարը (22,8 հազ. դրամ) արտացոլվում են հունիս ամսվա սոցիալական վճարների հաշվետվությունում, իսկ սոցիալական վճարը ենթակա է վճարման մինչև 20.07.2006թ. (ներառյալ): Մի-աժամանակ՝ հուլիսին վճարված հունիս ամսվա եկամուտները (70,0+40,0=110,0 հազ. դրամ) և հաշվարկված եկամտահարկը (8,0+(110,0-(20,0+3,3)-80,0)×20%=9,3 հազ. դրամ) արտացոլվում են 3-րդ եռամսյակի եկամտահարկի հաշվարկում (հուլիս ամսվան վերաբերող սյունակներում), իսկ եկամտահարկը կազմակերպության կողմից ենթակա է վճարման մինչև 05.08.2006թ. (ներառյալ):

Գործատուների մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող անձինք, որոնց համար օրենքով սահմանված կարգով կատարվել են պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, իրավունք ունեն ստանալու ապահովագրական նպաստներ: Ապահովագրական նպաստները նշանակվում են, եթե դրանց համար պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են աշխատունակության վերականգնման, հղիության ու ծննդաբերության արձակուրդի (ժամանակաշրջանի) ավարտման կամ հաշմանդամության խուճր սահմանելու օրվանից 6 ամսվա ժամկետում:

Հիվանդության նպաստը տրվում է հիվանդության (վնասվածքի) ամբողջ ժամանակաշրջանի համար, և այդ նպաստի նշանակման համար հիմք է հանդիսանում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը:

Պրոթեզավորման նպաստը տրվում է հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար, և այդ նպաստի նշանակման համար հիմք է հանդիսանում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը:

Առողջարանային բուժման նպաստը տրվում է հիվանդանոցային բուժական հաստատությունից (ստացիոնարից) անմիջապես առողջարան լիաբուժման ուղարկված, ինչպես նաև տուբերկուլյոզային առողջարան մեկնած վարձու աշխատողներին՝ առողջարանում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար, և այդ նպաստի նշանակման համար հիմք են հանդիսանում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը և առողջարանային բուժման ուղեգրի պատճենը:

Հղիության ու ծննդաբերության նպաստը տրվում է հղիության և ծննդաբերության՝ օրենքով սահմանված կարգով հատկացված (գործատուի կողմից ձևակերպված) արձակուրդի ժամանակաշրջանի համար, և այդ նպաստի նշանակման համար հիմք է հանդիսանում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը:

Վարձու աշխատողին ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստը տրվում է օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում, և այդ նպաստի նշանակման համար հիմք է հանդիսանում

բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության քերթիկը, իսկ մինչև 18 տարեկան անհատական խնամքի կարիք ունեցող երեխային կամ հաշմանդամ երեխային առողջարանում խնամելու դեպքում՝ նաև առողջարանային բուժման ուղեգրի պատճենը:

Ապահովագրական նպաստները հաշվարկվում են վարձու աշխատողի միջին աշխատավարձի (եկամտի): Վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած 3 օրացույցային ամիսներին տվյալ աշխատողի համար հաշվարկված աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից, որոնցից կատարվել են սույնալական վճարներ: Եթե ապահովագրական դեպքին նախորդող եռամսյա ժամանակաշրջանում վարձու աշխատողը եկամուտ չի ունեցել (աշխատավարձ չի ստացել), ապա որպես միջին ամսական աշխատավարձ (եկամուտ) հիմք է ընդունվում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի 13-ապատիկը (13,0 հազ.դրամ): Եթե ապահովագրական դեպքին նախորդող՝ տվյալ գործատուի մոտ աշխատանքի ժամանակաշրջանը պակաս է 3 օրացույցային ամիսներից, ապա միջին ամսական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկվում է փաստացի աշխատած ամիսների (օրերի) համար հաշվարկված եկամտից:

Վարձու աշխատողների ապահովագրական նպաստի հաշվարկումը իրականացնում է գործատուն՝ այն վճարելով տվյալ ամսվա համար հաշվարկված սույնալական վճարների հաշվին: Ապահովագրական նպաստը վճարվում է դրա նշանակումից հետո՝ առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: Եթե տվյալ ամսվա համար գործատուի բոլոր աշխատողների հաշվարկված սույնալական վճարների ընդհանուր գումարը բավարար չէ նպաստի գումարը ամբողջությամբ վճարելու համար, ապա գործատուն ապահովագրական նպաստի պակասող մասը վճարում է իր միջոցներից, որը հետագայում փոխհատուցվում է Հայաստանի Հանրապետության սույնալական ապահովագրության պետական հիմնադրամի կողմից: Այդ դեպքում գործատուն Հիմնադրամ է ներակայացնում իր հաշվառման վայրի հարկային մարմնի կողմից հաստատված սահման-

ված ձևի տեղեկանք, որի հիման վրա մեկամսյա ժամկետում կատարվում է իր միջոցների հաշվին վճարված նպաստի փոխհատուցումը:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերում, մասնավորապես՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում, գործատուն վարձու աշխատողին վճարում է արձակման նպաստ՝ առնվազն մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով, իսկ առանձին դեպքերում՝ 2 շաբաթվա աշխատավարձի չափով, որը հաշվարկվում է վարձու աշխատողի միջին օրական աշխատավարձի չափից ելնելով: Վարձու աշխատողին վճարվող արձակման նպաստից սույնիսկան վճարներ չեն հաշվարկվում:

Աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է վարձու աշխատողի հետ պայմանագրի լուծման օրը կատարել լրիվ վերջնահաշվարկ՝ վճարելով աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները: Վարձու աշխատողին վճարվող վերջնահաշվարկի գումարը կազմող աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարումներից սույնիսկան վճարները հաշվարկվում են ընդհանուր կարգով, բացառությամբ են կազմում չօգտագործված արձակուրդի դիմաց հաշվարկվող փոխհատուցումները, որոնցից սույնիսկան վճարներ չեն կատարվում:

Գործատուները յուրաքանչյուր ամսվա համար սույնիսկան վճարները հաշվարկում և ապահովագրության բյուջե են փոխանցում (վճարում) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ):

Գործատուները, յուրաքանչյուր հաշվետու ամսվա արդյունքներով, մինչև հաջորդ ամսվա 20-ը (ներառյալ), իրենց հաշվառման վայրի հարկային մարմին Կառավարության սահմանած պարզեցված ընթացակարգով ներկայացնում են սույնիսկան վճարների հաշվետվություն, որտեղ ներառվում են նաև սույնիսկան վճարների հաշվին գործատուի կողմից հաշվետու ամսում վճարված ապահովագրական նպաստները (հիվանդության նպաստ, պրոթեզավորման նպաստ, առողջարանային բուժման նպաստ, հղիության ու ծննդաբերության նպաստ, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ), ինչպես նաև վարձու աշխատողի մահվան դեպքում տրվող թաղման նկատար:

Անհատ ձեռնարկատերը սույնիսկական վճարների հաշվետվություն հարկային մարմին չի ներկայացնում, եթե հաշվետու ամսում չի հանդիսանում գործատու (չունի գրավոր կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիր) և փաստացի չի օգտագործում ֆիզիկական անձանց աշխատանքը, ծառայությունները:

Գործատուն նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվետվություններում սխալներ ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող է հարկային մարմին ներկայացնել սույնիսկական վճարների ճշտված հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար սույնիսկական վճարների պարտավորությունների վերահաշվարկ: Հարկային մարմինների կողմից գործատուների մոտ իրականացված ստուգումների ընթացքում գործատուի կողմից ներկայացված ստուգվող ժամանակաշրջաններին վերաբերող հաշվետվությունների ճշտում չի իրականացվում (սույնիսկական վճարների ճշտված հաշվետվություններ չեն ներկայացվում): Սույնիսկական վճարների ճշտված հաշվետվություններ չեն ներկայացվում նաև հարկային մարմինների կողմից կատարված ստուգմամբ ընդգրկված հաշվետու ժամանակաշրջանների համար: Ստուգված ժամանակաշրջանների համար սույնիսկական վճարների գծով պարտավորությունները կարող են ճշտվել միայն գործատուի կողմից ներկայացված դիմումի հիման վրա իրականացվող կրկնակի ստուգման արդյունքներով:

Գործատուների կողմից սույնիսկական վճարումների կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու օրվանից մինչև 365-րդ օրը ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ ապառքի 0.15%-ի չափով, ընդ որում օրենքի խախտումներ հայտնաբերելու դեպքում սույնիսկական վճարների գծով լրացուցիչ պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան հաջորդող երեք տարի հետո:

Սույնիսկական վճարների օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու դեպքում ապահովագրից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված սույնիսկական վճարների օբյեկտի նկատմամբ հաշվարկված սույնիսկական վճարների գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50%-ի չափով, իսկ հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույնիսկական

վճարների օբյեկտը կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում՝ սույնհավական վճարների ամբողջ գումարի չափով:

Ապահովադիրների՝ լիազոր մարմին ներկայացվող հաշվետվությունը օրենքով սահմանված ժամկետից երկու ամսից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար ապահովադիրից գանձվում է տուգանք՝ դրա հետևանքով չմուծված սույնհավական վճարի ընդհանուր գումարի 5%-ի չափով, բայց ոչ ավելի, քան սույնհավական վճարի ընդհանուր գումարն է:

Սույնհավական վճարների հաշվետվությունները սխալ կազմելու համար ապահովադիրներից գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով Հայաստանի Հանրապետության պարտադիր սույնհավական ապահովագրության բյուջե չմուծված կամ պակաս մուծված սույնհավական վճարի գումարի 10%-ի չափով:

Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու դեպքում գործատուն տվյալ ամսում հաշվարկում և վճարում է յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար սույնհավական վճար՝ 60,0 հազ. դրամի չափով, ինչպես նաև ենթարկվում է վարչական պատասխանատվության:

Սույնհավական վճարների կատարումը ուշացնելու դեպքում լիազոր մարմինը, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի, սույնհավական վճարի վճարման համար սահմանված ժամկետից 183 օրվա ընթացքում ապահովադիրին անվճարունակ ճանաչելու հայցով դիմում է դատարան, ընդ որում այդ հայցից լիազոր մարմինը չի կարող հրաժարվել, քանի դեռ սույնհավական վճարների գծով պարտավորություններն ամբողջությամբ մարված չեն:

Չկատարված սույնհավական վճարների պարտավորության չափը 500,0 հազար և ավելի դրամ կազմելու դեպքում Կառավարության սահմանած կարգով լիազորված մարմնի ղեկավարն իրավունք ունի ապահովադիրի սույնհավական վճարների պարտավորության համարժեք գույքի վրա արգելանք դնելու մինչև դատարանի կողմից վճռի կայացումը, բացառությամբ օրենքով սահմանված այն գույքի, որի նկատմամբ բռնագանձում չի կարող տարածվել, կամ որի պահպանման ժամկետը չի գերազանցում 30 օրը:

Արգելանքն առաջնահերթության կարգով կիրառվում է նախ՝ ապահովադրի բանկային հաշիվների, ապա՝ անշարժ գույքի, այնուհետև՝ այլ ակտիվների նկատմամբ:

Լիազորված մարմնի կողմից ապահովադրի գույքի արգելադրումից հետո՝ 30 օրյա ժամկետում, դատարանի վճիռը չապահովելու դեպքում ապահովադրի գույքը համարվում է արգելանքից հանված:

**Ձեռնարկ
ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ
ՇԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՎՃԱՐՆԵՐԻ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Էջադրումը և ձևավորումը
Ա. Հարությունյանի**

**Մինչտպագրական աշխատանքներ՝ «Գ-ԱԲ» ՍՊԸ
Տպագրությունը՝ «Է-Դ-Թ» ՊՐԻՆՏ» ՍՊԸ
Տպաքանակ՝ 500**